# Ազգ

Azg

10 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 150(5233)

ISSN: 1829-1651


# Քերրին չհարվածելու համար պայման է դնում

## *Լավրովը համամտություն է հայտնում, Դամասկոսը՝ հետաքրքրություն*

Քանի դեռ դիվանագիտությունը աշխատում է, ուրեմն դեռեւս հույս կա, որ թնդանոթները չեն որոտա: Վաշինգտոն-Մոսկվա դիվանագիտական ջանքերը երեկ կարծես առաջին պտուղները տվեցին: Առավոտյան ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին հայտարարեց, որ Սիրիան կարող է խուսափել ռազմական հարվածներից, եթե մեկ շաբաթվա ընթացքում ամբողջ քիմիական զենքի վերահսկողությունը փոխանցի միջազգային ընկերակցությանը: Այդ մասին հաղորդեց Ռոյթեր գործակալությունը:

Քերրիի խոսքերով՝ ԱՄՆ-ի ղեկավարությունը լիովին գիտակցում է, որ Սիրիայի հակամարտության լուծումը բացառապես քաղաքական ոլորտում է: «Ռազմական ուղի այստեղ պարզապես չկա. այս առումով մենք պատրանքներ չունենք», հայտարարել է պետքարտուղարը իր բրիտանացի պաշտոնակից Ուիլյամ Հեյգի հետ բանակցելուց հետո: Ընդսմին Քերրին ենթադրություն է արել, թե Սիրիայի նախագահ Բաշար Ասադը դժվար թե համաձայնի կատարել այդ պայմանը:

Հեյգը իր հերթին հավաստել է, որ Վաշինգտոնը տվյալ հարցում կարող է ակնկալել Լոնդոնի լիակատար դիվանագիտական աջակցությունը:

Օրվա երկրորդ կեսին, արդեն Մոսկվայում, ուր ժամանել էր Սիրիայի արտգործնախարար Մուալլիմը, համատեղ ասուլիսում Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը, պատասխանելով Քերրիի առաջարկած պայմանի վերաբերյալ լրագրողի հարցին, հայտարարեց, որ Մոսկվան համամիտ է, որ սիրիական քիմիական զինանոցը դրվի միջազգային վերահսկողության տակ՝ եթե դա է Սիրիան չհարվածելու պայմանը: Նա պատրաստակամություն հայտնեց համոզելու սիրիական կողմին: Դամասկոսը, իր հերթին «հետաքրքրական» գտավ առաջարկը:

Փոխադարձ հայտարարություններից հետո սիրիական ճգնաժամի մասին արտահայտվեց նաեւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը, առաջարկելով որ Դամասկոսը միջազգային վերահսկողության զոնաներ ստեղծի Սիրիայում, որտեղ կոչնչացվեն այդ զենքերը:

Հիշեցնենք, որ Սիրիան այն 7 երկրների շարքում է, որոնք միջազգային վերահսկողության չեն ենթարկել իրենց քիմիական զինանոցը:

# Մաքսային միության անջուր խմորը

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**Բնականաբար, Ազգային ժողովի՝ երեկ սկսված աշնանային նստաշրջանի առաջին նիստում պետք է կրքեր բորբոքվեին Մաքսային միությանը, Հայաստանի հնարավոր անդամակցության շուրջը՝ հետագայում՝ Եվրասիական միությանը:**



Նախ՝ ԲՀԿ-ից **Նաիրա Զոհրաբյանը** տեղյակ պահեց, որ Ազգային ժողովի Եվրոինտեգրման հանձնաժողովը դիմել է խորհրդարանի նախագահին՝ հրավիրելու Հայաստանի արտաքին գերատեսչության ներկայացուցիչներին, որպեսզի վերջիններս համակողմանի տեղեկություններ տրամադրեն պատգամավորներին Մաքսային միությանը Հայաստանի հնարավոր անդամակցության շուրջը: Նա անընդունելի համարեց ԱԺ մեկուսացվածությունն այս խնդրում: Ըստ նրա՝ հրատապ է հարցի քննարկումն Ազգային ժողովում, քանի որ տեսակետներ կան այդպիսի անդամակցությամբ երկրի ինքնորոշումը կորցնելու վերաբերյալ: Ազգային ժողովի նախագահ **Հովիկ Աբրահամյանն** էլ, չհամաձայնելով ինքնորոշման կորստի մասին տեսակետներին եւ նշելով, որ իրեն սատարող քաղաքական ուժերի հետ նախագահը քննարկել է հարցը, եւ այդպիսի որոշումը բխում է Հայաստանի ու նրա ժողովրդի շահերից, ԱԳՆ ղեկավարության հետ հանդիպում խոստացավ:

*Տես էջ 2*

# PKK-ն առկախեց Թուրքիայից իր մարտիկների դուրսբերումը

Քրդական աշխատավորական կուսակցության՝ PKK-ի մարտիկները դադարեցրել են Թուրքիայից իրենց հետքաշումը, այդ երկրի կառավարությանը մեղադրելով հաշտության բանակցությունների շրջանակներում նախատեսված քայլերը չկատարելու մեջ: Այդ մասին հաղորդում է քուրդ անջատականներին մոտիկ կանգնած Firat News կայքէջը:

Ընթացիկ տարվա մարտին PKK-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանը թուրքական բանտից հրադադարի կոչ էր արել քրդերին: Դրանից հետո PKK-ի մարտիկները սկսել էին թուրքական տարածքից հետ քաշվել դեպի իրաքյան Քրդստան:

Սակայն անցյալ շաբաթ PKK-ի քաղաքական թեւի ղեկավարներից Ջեմիլ Բայիքը Firat News-ին հայտարարեց, թե Անկարան չի կատարել պայմանագրի իր մասը եւ ընդամենը դադարեցրել է ռազմական գործողությունները, անտեսելով քուրդ փոքրամասնության իրավունքներն ընդլայնելու սեփական պարտավորությունը:

«Ֆիգարո» թերթը հիշեցնում է, որ դեռ անցյալ ամիս Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը իր հերթին քուրդ անջատականներին մեղադրել էր նահանջի խոստումը չկատարելու մեջ: Էրդողանը պնդել էր, թե «Թուրքիայից հեռացել է անջատականների ընդամենը 20 տոկոսը, եւ խոսքն առավելապես կանանց եւ երեխաների մասին է»:

Ներկայումս քրդերը կազմում են Թուրքիայի բնակչության մոտավորապես 1/5-ը:

# Դինքի սպանության հրահանգը՝ կիրիլյան ծածկագրերով

Փաստաբան Ֆեթհիյե Չեթինն իր «Ամաչում եմ. Հրանտ Դինքի սպանության դատավարությունը» գրքում նոր բացահայտումներ է արել: «Արմենպրեսը», վկայակոչելով թուրքական Haberler.com-ը, տեղեկացնում է. «Ֆեթհիյե Չեթինը գրքում հրապարակել է, որ Թուրքիայի Ազգային հետախուզական ծառայությունը Դինքի սպանության հրահանգը տվել է Կիրիլի այբուբենի տառերով արված ծածկագրի միջոցով»:

«2010 թվականի մարտի 16-ին բջջային հեռախոսիս փակ համարից զանգահարեց մի մարդ, ով ներկայացավ Ռամազան անունով եւ ասաց, որ աշխատում է Ազգային անվտանգության ծառայության Արեւելյան Անատոլիայի շրջանի գլխավոր վարչությունում՝ որպես ծածկագրեր եւ գաղտնաբառեր մշակող մասնագետ: Նա ասաց, որ իր ձեռքում կան Դինքի սպանության հետ կապված կարեւոր փաստաթղթեր, որոնք կկարողանա տալ մեզ այն դեպքում, եթե մենք գնանք Հալեպում Ֆրանսիայի հյուպատոսարան», նշել է Ֆեթհիյե Չեթինը եւ պատմել, թե ինչպես է կիրիլյան այբուբենի միջոցով կարողացել փաստաթղթերում առկա թվերով դուրս բերել «Հրանտ» անունը:

Այնուհետեւ Չեթինը պարզել է, որ Ռամազան Դյունդարն ապաստանել է Հալեպում, ապա անցել Լիբանան, սակայն այնտեղից հեռացել է անհայտ ուղղությամբ:

Իսկ Ազգային հետախուզական ծառայություն դիմելու Չեթինի փորձերն անցել են ապարդյուն, քանի որ այնտեղ փաստաբանին հայտնել են, որ Ռամազան Դյունդար անունով մարդ չունեն իրենց անձնակազմում:

# ԱՄՆ պետդեպարտամենտի բարձրաստիճան պաշտոնյան՝ Ադրբեջանի «սեւ ցուցակում»

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Այո, միայն այսպես կարելի է բնորոշել պաշտոնական Բաքվի «խնդրանքը»՝ Միացյալ Նահանգների փոխպետքարտուղարի օգնական Թոմաս Մելիայի գլխավորած պատվիրակության այցը «նախագահական ընտրություններից հետո տեղափոխելու» մասին:

Իրավիճակի տրագիկոմիզմն այն է, որ Թոմաս Մելիան պատրաստվում էր Բաքու ուղեւորվել ոչ թե Կասպից ծովի ոչ այնքան մաքուր լողափերով վայելելու «թավշյա սեզոնը», այլ՝ հատկապես «ծանոթանալու Ադրբեջանում նախագահական ընտրությունների մթնոլորտին», որի մասին ավելի վաղ ծանուցել էր Բաքվում ԱՄՆ դեսպանատունը:

Ու եթե ադրբեջանական կողմը «խնդրել է այցը տեղափոխել նախագահական ընտրություններից հետո», ուրեմն իշխող վարչախումբը փաստացի ԱՄՆ պետդեպարտամենտի բարձրաստիճան պաշտոնյայի առջեւ խստորեն փակել է իր նախընտրական «խոհանոցի» դռները:

*Տես էջ 5*

# Լիտվայի նախագահը Հայաստանին ցտեսություն է ասել, իսկ արտգործնախարարը Հայաստան-ԵՄ հարաբերությունները առաջ մղելուն է կողմ

Սեպտեմբերի 7-ին Վիլնյուս աշխատանքային այցով ժամանած արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է Եվրոպական միությունում նախագահող Լիտվայի ԱԳ նախարար Լինաս Լինկեւիչուսին:

ԱԳՆ հաղորդագրության համաձայն՝ նախարարներն անդրադարձել են Մաքսային միությանն անդամակցելու Հայաստանի որոշմանը եւ այդ համատեքստում հանգամանալից քննարկել Հայաստան-Եվրոպական միություն հարաբերությունների հետագա զարգացումը:

Էդվարդ Նալբանդյանը վերահաստատել է Հայաստանի պատրաստակամությունը՝ շարունակելու ամենատարբեր ուղղություններով Եվրոպական միության հետ հնարավորինս սերտ փոխգործակցությունը, որքանով որ ԵՄ-ի համար դա ընդունելի կլինի, եւ որը չի հակասի Մաքսային միությանը Հայաստանի անդամակցությանը:

Նախարարները համակարծիք են եղել, որ հարկավոր է առաջ մղել Հայաստան - Եվրոպական միություն հարաբերությունները՝ հիմնվելով վերջին տարիներին համատեղ արձանագրած արդյունքների վրա:

Վերջին միտքը քիչ տարօրինակ է հնչում այն համատեքստում, ինչ դեռեւս նախորդ շաբաթավերջին հայտարարեց ԵՄ-ում նախագահող այս նույն երկրի՝ Լիտվայի նախագահը, որն իր ելույթում արդեն իսկ Հայաստանը դուրս թողեց Վիլնյուսում Ասոցիացման համաձայնագրի հետ որեւէ քայլ անողների ցուցակից:



*Հայաստանի եւ Լիտվայի արտգործնախարարները*

**Վ. Պ.**

# Մաքսային միության միանալը բխում է ՀՀ շահերից

## *Ուրեմն Ասոցիացման համաձայնագիրը չէ՞ր բխում այդ շահերից*

«Բա իմացա՞ր, մտավ Ռուսաստանի կազմի մեջ»,- ասաց երթուղայինի հոգնած վարորդը՝ իր կողքին հարմարված, ըստ ամենայնի՝ ծանոթին: «Մտավ», պետք է հասկանալ՝ Հայաստանը, իսկ նման եզրակացությունը, հայ սովորական քաղաքացին, արել է այն բանից հետո, երբ ՀՀ նախագահը սեպտեմբերի 3-ին Մոսկվայում հայտարարեց, թե «Հայաստանը որոշում ունի միանալու Մաքսային միությանը»: Ընդ որում, ամենայն հավանականությամբ, երթուղայինի վարորդը անձամբ չի էլ լսել Սերժ Սարգսյանին, չի էլ հետեւել լուրերին, նրան «ասել են» ոչ թե լուրը, այլ արդեն իսկ պատրաստի ենթադրությունը, ավելին՝ փաստը. «Մտանք Ռուսաստանի կազմի մեջ»:




Տվյալ վարորդի ոչ տարիքը գիտեմ, ոչ կրթական մակարդակը, ոչ քաղաքական հայացքները, կամ որեւէ այլ տվյալ-բնութագիր նրանից: Հետեւաբար, գուցե Հայաստանի «նման որոշում»-ից նման եզրակացություն կարող է անել կրթական ոչ բարձր ցենզ ունեցող քաղաքացին, ով ոչ ցանկություն ունի, ոչ էլ ունակություն՝ խորամուխ լինելու իրադարձություններում ու փաստերում: Սակայն այս օրերին ֆեյսբուքում ընկերներից մեկը, ով բարձրագույն կրթություն ունի, գրեց. «Հիմա սեպտեմբերի 21-ին էլ անկախության օրը չե՞նք տոնելու...»:

Հայաստանի սովորական քաղաքացին, այդ թվում՝ բարձրագույնավորը, ենթադրում է, կարծում է, մտածում է, որ Մաքսային միությանը միանալու «Հայաստանի որոշումը» նշանակում է Հայաստանի անկախության կորուստ: Այսինքն՝ Հայաստանի անկախության կորուստ չէ ԱՊՀ կազմում մնալը, անկախության կորուստ չէր ՀԱՊԿ-ին անդամագրվելը, բայց անկախության կորուստ է հենց Մաքսային միությանը միանալու որոշումը: Ի դեպ, Ղազախստանը անդամ է եւ ԱՊՀ-ի, եւ ՀԱՊԿ-ի, եւ Մաքսային միության, բայց, «չգիտես ինչու», Ղազախստանը համարում են անկախ երկիր, ավելին, չնայած ղազախները ՀԱՊԿ-ի անդամ են, ինչը ենթադրում է, որ Աստանան պարտավոր է որեւէ այլ (կազմակերպության ոչ անդամ) երկրի հետ զորավարժություններ անելուց առաջ իր այդ որոշումը համաձայնեցնել ՀԱՊԿ անդամ իր դաշնակիցների հետ, այդուհանդերձ, ըստ ադրբեջանական ԶԼՄ-ների, ղազախները շուտով համատեղ զորավարժություններ կանեն թուրքական ու ադրբեջանական զորախմբերի հետ Թուրքիայում: Ուրեմն կարելի է անկախ մնալ՝ լինելով ԱՊՀ-ում, ՀԱՊԿ-ում եւ Մաքսային միությունում միաժամանակ:

Այլ հարց է, որ Հայաստանի քաղաքացիները ունեն իրավունք՝ տեղեկացված լինելու, ի՞նչ է կոնկրետ Մաքսային միությունը, ի՞նչ է լինելու Հայաստանում այդ միությանն անդամակցելուց հետո, եւ ի՞նչ կարող էր լինել, եթե Հայաստանը ստորագրեր ԵՄ-ի հետ Ասոցիացման համաձայնագիրը:

Հայաստանի քաղաքացին իրավունք ունի մասնակցելու Հայաստանի որոշման կայացմանը:

Երեկ մեկնարկած ԱԺ-ի աշնանային նստաշրջանում պարզ դարձավ, որ պատգամավորներից շատերն էլ չգիտեն, թե ի՞նչ է նշանակում լինել Մաքսային միության անդամ, եւ թե որքանով է դա ավելի շատ բխում ՀՀ շահերից, ինչում վստահ է ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանն, օրինակ, քան Ասոցիացման համաձայնագիրը: Այսինքն, եթե Մաքսային միության անդամի կարգավիճակով հնարավոր չէ Ասոցիացման համաձայնագիր կնքել ԵՄ-ի հետ, ինչի մասին եվրոպաշտոնյաները բազմիցս են հայտարարել, եւ ինչի մասին, անշուշտ, ՀՀ ղեկավարությունը գիտեր եւ գիտի, ու իմանալով հանդերձ, «Հայաստանը որոշում է կայացնում»՝ միանալու Մաքսային միությանը, որը «բխում է ՀՀ շահերից», կնշանակի կամ Ասոցիացման համաձայնագիրը չէր բխում ՀՀ շահերից, կամ բխում էր, բայց ավելի քիչ, քան Մաքսայինին միանալը: Ստացվում է, որ ՀՀ ղեկավարությունը շուրջ 4 տարի բանակցություններ էր վարում ԵՄ-ի հետ մի համաձայնագրի շուրջը, որը կամ առհասարակ չի բխում ՀՀ շահերից, կամ քիչ է բխում...

Իսկ Հայաստանի քաղաքացին, երբ նրան չեն ասում այն ամենն, ինչն իրեն հետաքրքրում է, ու այն ամենն, ինչը վերաբերում է իրեն, սկսում է ենթադրել, եզրակացնել, վստահություն հայտնել... Գուցե սխալ, բայց յուրաքանչյուրս ունենք սխալվելու իրավունք, եթե պետության ղեկավար չենք:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# «Եվրոինտեգրման գործընթացը կարող է մի քիչ դանդաղել, բայց անշեղորեն առաջ կգնա». Վազգեն Մանուկյան

Մոսկվա կատարած այցից հետո մամուլում եւ սոցիալական ցանցերում քննարկվող թիվ մեկ հարցի՝ Մաքսային միությանը միանալու ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի որոշման վերաբերյալ «Անկախ»-ին իր տեսակետը հայտնեց ԱԺՄ նախագահ, ՀՀ Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանը: «Հայաստանի անկախության առաջին իսկ օրվանից, փոխելով 3 նախագահ, 5-6 խորհրդարան ու 6-7 վարչապետ, տարվել է միեւնույն արտաքին քաղաքականությունն իր հիմնական գծերով՝ ստրատեգիական գործընկերությունը եւ կապվածությունը Ռուսաստանի հետ, որտեղ հիմնականում դրված են եղել ոչ միայն տնտեսական, այլեւ պաշտպանության եւ անվտանգության հարցեր»,- ասաց նա: Սակայն, Մանուկյանի դիտարկմամբ, դրա հետ միասին քայլ առ քայլ Հայաստանը գնացել է դեպի Եվրոմիություն՝ վերցնելով եվրոպական արժեքները, եվրոպական ռեֆորմները տեղափոխելով մեր հողի վրա եւ մեծ արդյունքներ է գրանցել (ինչը նաեւ Եվրոպայի գնահատականն է)՝ ի տարբերություն հետխորհրդային շատ այլ հանրապետությունների: Մանուկյանը նաեւ հիշեցնում է, որ Հայաստանը կապված է ՆԱՏՕ-ին, մասնակցել է ՆԱՏՕ-ի զորավարժություններին, եւ դա որեւէ հակասություն չի առաջացրել:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

# Մաքսային միության անջուր խմորը

1-ին էջից

«Ժառանգությունից» **Ռուբեն Հակոբյանի** կարծիքով էլ Հայաստանի համար այս ճակատագրական եւ պատմական ընտրության վերաբերյալ բարձրաձայնումը շրջանցել է խորհրդարանը, եւ պետք էր նախ այդ հարցը քննարկել խորհրդարանում: Ու մինչ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը հակադարձում էր, թե նախագահն իր իրավասությամբ է Հայաստանի այդպիսի ցանկության մասին ասել, իսկ համաձայնագրերի տեքստը պետք է բերվի խորհրդարան, քննարկվի, ու մինչեւ այդ քննարկումն էլ կհստակեցվեն Հայաստանի շահերն ու ըստ այդմ կկազմվեն համաձայնագրերը, չհամոզեց պատգամավորներին: **Նիկոլ Փաշինյանը** հիշեցրեց ԱԺ նախագահին խորհրդարանի դերը բարձրացնելու նրա հին մտադրությունը, նկատելով, որ Մաքսային միությանը միանալու ցանկությունը նախագահ Սարգսյանը բարձրաձայնել է՝ առանց պետական ինստիտուտների մակարդակով քննարկելու (իսկ ՀՀԿ-ն պետական մարմին չէ): Բացի դրանից՝ չորս տարի Եվրոմիության հետ Ասոցիացման պայմանագրի շուրջը բանակցելուց հետո՞ է միայն նախագահը, այն էլ Մոսկվայում, հասկացել, որ Հայաստանի շահերից Մաքսային միությանն ու Եվրասիական միությանն անդամակցելն է բխում: Ազատդեմոկրատական **Ալիկ Արզումանյանն** էլ ասելիք ուներ այդ հարցի շուրջը, եւ եթե իր հետ չեն քննարկել խնդիրը՝ որտե՞ղ պետք է ասեր: Հովիկ Աբրահամյանը մասնացույց էր անում նույն խնդրի հետ կապված ԲՀԿ-ական Նաիրա Զոհրաբյանին նիստի սկզբում տված խոստումը, թե պաշտոնյաները կհրավիրվեն ԱԺ, կքննարկեն խնդիրը: **Արտաշես Գեղամյանն** էր միայն, որ հստակ նշում էր, թե ամենասթափ ու ամենճիշտ որոշումն է կայացրել երկրի նախագահը, իսկ Հ. Աբրահամյանն իր հակափաստարկները բերելիս նշում էր, թե ոչ ոք, Հայաստանի ոչ մի պաշտոնյա չի ասել, որ Ասոցիացման համաձայնագիրը չի ստորագրվելու: Ալիկ Արզումանյանն էլ հիշեցրեց եվրոպաշտոնյաների տեսակետները Մաքսային միության ու Խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու անհամատեղելի լինելու մասին՝ պատկերավորելով. «Նույնն է, որ հարսին տվել են ուրիշի, բայց դու շարունակում ես պնդել, թե ամուսնանալու ես նրա հետ»:

Ի վերջո հայտնի դարձավ, որ այսօր առավոտյան, մինչեւ ԱԺ նիստը Հայաստանի արտգործնախարարը փակ հանդիպումներ է ունենալու ԱԺ խմբակցությունների հետ եւ պատասխանելու է այս թեմայով նրանց հարցերին: Սա փաստորեն պատգամավորների մտահոգությունների արդյունքում տեղի ունեցավ, չնայած՝ միգուցե երկրի ղեկավարությունը սպասում էր խորհրդարանականների պահանջին եւ նախօրոք էր պլանավորել այդպիսի հանդիպումը: Բոլոր դեպքերում այսօր տեղի կունենա Հայաստանի արտգործնախարարի հանդիպումը պատգամավորների հետ՝ հստակ բացատրություններ ներկայացնելու համար Մաքսային միությանը Հայաստանի հնարավոր անդամակցության առիթով, ու միգուցե այդ հանդիպումից հետո իշխանական պատգամավորները ձեւավորված կարծիք ունենան: Առայժմ այդ հարցի մասին երեկ չխուսափեցին արտահայտվել **Էդուարդ Շարմազանովը, Գալուստ Սահակյանը**, ավելի վաղ ՀԱԿ-ում իր տեսակետն էր ներկայացրել **Լեւոն Տեր-Պետրոսյանը**: Սպասվում է **Ռոբերտ Քոչարյանի** տեսակետը:

Լրագրողները Գալուստ Սահակյանից հետաքրքրվում էին, թե նույն օրը, երբ Սարգսյան-Պուտին հանդիպումն էր, ինչպե՞ս է, որ նա բոլորովին սենսացիայի չէր սպասում, ու նրան հայտնի չէր Հայաստանի՝ Մաքսային միությանն անդամակցելու տրամադրվածության մասին: Ի պատասխան նա ասում էր, որ Մաքսային միություն մտնելու շահագրգռվածությունը մերը պետք է լինի, այդ առթիվ հիշեցնելով ավելի վաղ արտահայտումներ, իսկ Եվրասիական միության վերաբերյալ նախագծերը դեռ չկան, որ քննարկվեն: Հանրային քննարկումներ սպասվո՞ւմ են այս հարցով. նախագահն իր լիազորությունն ունի որոշում կայացնելու, իսկ խորհրդարանի վավերացման ժամանակ քննարկում կլինի՝ ըստ Գ. Սահակյանի:

Է. Շարմազանովն էլ դեմ էր սկսված հակառուսական հիստերիային՝ նշելով, որ իրենք ոչ ռուսամետ են, ոչ արեւմտամետ, հայաստանակենտրոն են, իսկ Տեր-Պետրոսյանի գնահատականը համարեց իրարամերժ, քաղաքական թոշակառու անվանելով նրան:

Արժե հիշեցնել նախորդ օրը Մաքսային միությանն անդամակցության վերաբերյալ Տեր-Պետրոսյանի գնահատականը, որով նա նախագահ Սարգսյանի հայտարարությունը Մոսկվայում անվանել էր ճախորդ քայլ, ավելի նվաստացուցիչ, քան Բաթումի պայմանագիրը: Չնայած առաջարկել էր, որ պրոֆեսիոնալ տնտեսագետները նստեն-հաշվարկեն Մաքսային միությանն անդամակցելու հնարավորություններն ու սահմանափակումները Հայաստանի համար: Եվ անգամ՝ առաջարկել էր չվիրավորել Ռուսաստանին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# 13 պարկուճից 11-ը պատկանել է Խաչատրյաններին, 2-ը՝ Բուդաղյաններին

*Լիսկայի որդին ու թիկնապահը շաբաթ երեկոյան ազատ են արձակվել*



«Ես դիմեցի նախագահին ու պատասխանը ստացա: Գրավոր պատասխան չստացա, բայց գործողություններով ստացա»: ԼՂՀ զորամասերից մեկի հրամանատար Արտակ Բուդաղյանի հայր **Էմիլ Բուդաղյանը** նկատի ունի ՊՆ քննչականի որոշումը, համաձայն որի Գորիսի կրակոցներից հետո ձերբակալված Ավետիք Բուդաղյանին սպանած, իսկ Արտակ Բուդաղյանին մարմնական ծանր վնասվածքներ հասցրած Սյունիքի նախկին մարզպետի որդին՝ Տիգրան Խաչատրյանն ու թիկնապահը՝ Զարզանդ Նիկողոսյանը ազատ են արձակվել, եւ նրանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է:

Էմիլ Բուդաղյանը բաց նամակ էր հղել նախագահ Սերժ Սարգսյանին, ներկայացրել իրավիճակը, այն ապօրինությունները, որ կատարում են իրավապահ մարմիններն ու հատկապես զինվորական դատախազությունը, եւ խնդրել, որ նախագահը հետեւի գործի քննությանը հանուն արդարության:

Բաղրամյան 26-ից արձագանք չէր եկել. դրա փոխարեն Լիսկայի որդին եւ թիկնապահն ազատ արձակվեցին: Դա նշանակում է, որ Հայաստանում եթե ունես լավ թիկունք եւ իշխանության բարեհաճությունը՝ հնարավոր է կրակել, մարդ սպանել ու մնալ անպատիժ:

«Ես համոզվեցի շատ-շատ բաներում, որ այս գործունեությունը՝ քրեական հետապնդման գործողությունը, զուտ ուղղորդված էր: Խաղ կազմակերպեցին՝ ցույց տալու, որ քննչական գործունեություն է կատարվում, բայց մյուս կողմից էլ Խաչատրյանների ընտանիքին նրանք պաշտպան կանգնեցին, եւ հենց Գեւորգ Կոստանյանը իր ղեկավարությամբ իր քննիչին նշանակեց չորրորդ դատապաշտպան Սուրիկ Խաչատրյանի (Լիսկա) համար», ասաց Էմիլ Բուդաղյանը՝ հավելելով, որ պատահական չի համարում այն հանգամանքը, որ դեպքից միայն 20 օր անց են իրեն տուժողի իրավահաջորդ ճանաչել: Էմիլ Բուդաղյանը համոզված է, որ իրավապահ մարմինների նման վերաբերմունքի պատճառն այն է, որ իրենք հնարավորություն չունենային ծանոթանալու քրեական գործի նյութերին:

«Դրա գաղտնիքն այն է, որ եթե ես ունենայի դատապաշտպան, ժամանակից շուտ շատ հարցեր կպարզաբանեինք: Համոզված եմ, որ այս ամենի վերեւում կանգնած են վերադաս մարմինները, նրանք ողջախոհ չեն մտածում, որ հետագայում ինչեր կարող են ստացվել, նոր հանցագործությունների են նրանք հրահրում Սուրիկ Խաչատրյանի նման մարդկանց», ասում է Էմիլ Բուդաղյանը: «Սա արդարադատության պարտությունն է, երբ մեղավորներն ազատ են արձակվում, երբ տուժողը վերածվում է մեղադրյալի», ասաց Բուդաղյանների փաստաբան **Հայկ Ալումյանը**՝ հավելելով, որ Արտակ Բուդաղյանի նկատմամբ նախաքննությունը շարունակվում է:

«**Ազգ**»-ի նախորդ համարներից մեկում ներկայացրել էինք ապօրինությունների այն ցանկը, որ կատարել է զինվորական դատախազությունը՝ պաշտպանելու Խաչատրյանների շահերը: Թեպետ իրավապահ մարմիններն ամեն ինչ արեցին, որ Սուրիկ Խաչատրյանին մեղադրանք չառաջադրվի, սակայն գործի քննությունից հետո պարզվեց, որ առնվազն երկու հոդվածով Լիսկայի դեմ պետք է քրեական գործ հարուցվեր: Նախ, նա տանը պահել է ինքնաշեն հրացան, երկրորդ, այդ հրացանից օգտվելով Տիգրան Խաչատրյանը մարմնական ծանր վնասված է հասցրել:

«Ունենք ապացույց, որ Սուրիկ Խաչատրյանի մոտից առգրավված զենքերից մեկը՝ «Բերետտա» ատրճանակը ինքնաշեն է, այսինքն՝ գործարանային արտադրության չէ, ապօրինի սարքած է: Ակնհայտ է, որ այդ ատրճանակը չի կարող լինել օրինական, եւ պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի այն անձը, որ այդ ատրճանակը սարքել, պահել եւ օգտագործել է: Բայց քննչական մարմնից տեղեկանք է գալիս, որ այդ ինքնաշեն ատրճանակը օրինական կարգով տրվել է Սուրիկ Խաչատրյանին 2009 թվականին: Ատրճանակը նվիրել է ՀՀ նախկին ոստիկանապետ Ալիկ Սարգսյանը», մանրամասնեց Ալումյանը: Ինչ վերաբերում է փաստին, որ Սուրիկ Խաչատրյանի զենքով են սպանել Ավետիք Բուդաղյանին, Ալումյանն ասաց, որ այդ հոդվածն ունի հետաքրքրական ձեւակերպում: «Երեւույթը համարվում է հանցագործություն, եթե առաջացրել է ծանր հետեւանքներ: Նախաքննական մարմինը համոզված է, որ առկա է դիտավորյալ սպանություն Տիգրանի եւ Զարզանդի կողմից, բայց մեղադրանք չէին առաջադրում Սուրիկ Խաչատրյանի նկատմամբ այնքան ժամանակ, մինչեւ պարզվեց, որ ծանր հետեւանք չկա, քանի որ սպանություն չէ, այլ ինքնապաշտպանություն: Այս հնարքով քրեական պատասխանատվությունից ազատեցին նաեւ Սուրիկ Խաչատրյանին»:

*Տես էջ 8*

## ՀԱԿԻՐՃ

### Մայր աթոռում այսօր կբացվի «Ռուբեն Սեւակ» թանգարան

Այսօր՝ ժամը 11-ին Մայր աթոռ Ս. Էջմիածնում կկատարվի բացումը Ռուբեն Սեւակի անվան թանգարանի՝ հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի եւ մասնակցությամբ թանգարանի բարերար ֆրանսահայ Հովհաննես Չիլինգիրյանի, որ եղբորորդին է Ռ. Սեւակի:

18-րդ դարում կառուցված Ղազարապատ կոչված շենքում տեղակայված թանգարանը հիմնանորոգվել է տիար Հովհաննես Չիլինգիրյանի ազնիվ բարերարությամբ: Թանգարանում ցուցադրվելու են տիար Չիլինգիրյանի կողմից Մայր աթոռին նվիրաբերված բացառիկ եւ արժեքավոր շուրջ 200 կտավներ, ինչպես նաեւ՝ նահատակ նշանավոր բանաստեղծ, բժիշկ Ռուբեն Սեւակին պատկանող ածխանկարներ, իրեր ու փաստաթղթեր, պատմական սրբազան ցուցանմուշներ, հայ արվեստի արժեքավոր գործեր, արեւմտահայ նկարիչների հավաքածուներ:

### ՍԴՀԿ ընդհանուր համագումարը՝ այսօր

Այսօր՝ ժամը 16:00-ից «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցի «Տիգրան Մեծ» սրահում տեղի է ունենալու ՍԴՀԿ XX-րդ Ընդհանուր համագումարի հանդիսավոր նիստը, որին մասնակցում են աշխարհի 17 երկրներից պատվիրակներ: Համագումարը տալու է մի շարք ազգային եւ ներքին քաղաքական հարցերում կուսակցության ընդհանուր դիրքորոշումը, ինչպես նաեւ ընտրելու է նոր Կենտրոնական վարչության կազմը:

ՍԴՀԿ ՄԱՄԼՈ ԴԻՒԱՆ

### Նոր բացահայտումներ Գերենի դամբարանադաշտում

Արցախում գտնվող Գերենի դամբարանադաշտում այս տարի կատարված պեղումները հետաքրքրական բացահայտումների առիթ են դարձել: Գերենի պեղումների ղեկավար, հնագետ **Արտակ Գնունին** «Արմենպրեսի» հետ զրույցում նշել է, որ հայտնաբերել են երկու բավականաչափ մեծ կարասային թաղումներ. «Կարասներից մեկը դրված էր այն հարթակի վրա, որտեղ դիակիզում է իրականացվել»:

Գնունու խոսքով՝ Գերենը հսկայական դամբարանադաշտ է, այնտեղ կան մի քանի ժամանակաշրջանների հուշարձաններ: Հնագետը նշել է, որ վերջին 10 տարիների ընթացքում դամբարանադաշտից 200-ից ավելի կավանոթներ են պեղվել: Գերենից պեղված նյութերը մասամբ գտնվում են Բերձորի թանգարանում, մասամբ էլ՝ Ստեփանակերտի պետական թանգարանում:

### Ամստերդամի կամուրջը վերանվանվել է «Հայկական կամուրջ»

Ամստերդամի հինավուրց կամուրջներից մեկը, որը 17-րդ դարում առեւտրի տարանցիկ ճանապարհ է ծառայել Ջուղայի հայ վաճառականների համար, վերանվանվել է «Հայկական կամուրջ»:

«Արմենպրեսը», վկայակոչելով «Կռունկ» հայկական լրատվական ցանցը, տեղեկացնում է, որ կամուրջն անունը ստացել է Հոլանդիայի հայ համայնքի ակտիվիստներից վաթսունամյա Նիկոլայ Ռոմաշուկի (Հայրապետյան) տարիների աշխատանքի շնորհիվ:

Երկար տարիներ Ամստերդամի համալսարանի հոլանդական ազգային արխիվներում ուսումնասիրելով Ջուղայի հայ վաճառականների պատմությունը՝ Ռոմաշուկը եւս մի քանի տարի աշխատել է Ամստերդամի քաղաքային իշխանությունների հետ կամուրջը հայ վաճառականների պատվին կոչելու համար: Քաղաքապետարանի համաձայնությունը ստանալու համար նա հայ-հոլանդական պատմական կապերը վկայող մի քանի ապացույցներ է հայտնաբերել եւ ներկայացրել:

Ռոմաշուկի ջանքերի շնորհիվ է նաեւ կառուցվել Հոլանդիայում Հրանտ Դինքի անունը կրող հայկական միակ գերեզմանատունը եւ նրա նախաձեռնությամբ հրատարակվում է Հոլանդիայում «Բարեւ Ձեզ» հայկական միակ ամսագիրը:

# Գրագողության դեմ փոփոխությունները՝ խորհրդարանում

Լրատվական դաշտում արդարությունը վերականգնելու մղումով եւ լրատվական դաշտի մի շարք պատասխանատուների նախաձեռնությամբ փոփոխություններ ու լրացումներ են կատարվում «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքի մասին» օրենքում, դրանք երեկ խորհրդարանում ներկայացրեց նախագծի հեղինակային պատգամավորական խմբից **Արփինե Հովհաննիսյանը**: Նախագծով կայքերին պարտադրվում է ուրիշ լրատվամիջոցից՝ մամուլից նյութ վերատպելիս ակտիվ հղում անել, նյութերն ամբողջությամբ կամ գրեթե ամբողջությամբ չվերատպել, մեջբերումն իրականացնել նպատակն արդարացնող ծավալով , նյութի բուն էությունը չբացահայտելով՝ ակտիվ հղում անելով սկզբնաղբյուրին, այդպիսով մրցակցային հավասար դաշտ ապահովելով: Փաստորեն մամուլի՝ սկզբնաղբյուրի անտեսման պատճառով կայքերը հաճախելիություն են ավելացնում, իսկ սկզբնաղբյուրները տուժում են (մեր կողմից ավելացնենք՝ նաեւ ֆինանսապես, քանի որ կայքում հրապարակումն ընթերցելով այլեւս թերթ չեն գնում): Այս նոր խաղի կանոնները չպահպանելու դեպքում նախատեսվում է տուգանք 100-200 հազար դրամ՝ դատական կարգով, իսկ դատարան պետք է դիմեն լրատվամիջոցները՝ փաստորեն միմյանց դեմ հայց ներկայացնելով, ինչը, նկատենք, այնքան էլ իրատեսական չէ հայ իրականութան մեջ, գումարած դատական քաշքշուկն ու ժամանակի կորուստը: Եվ ընդհանրապես էլ, այս բոլորն առկա օրենսդրությունն էլ ապահովում է, սակայն ոչ ոք դատարան չի դիմում, ինչը նկատեց նաեւ Արփինե Հովհաննիսյանը: Սակայն նոր փոփոխություններով դաշտն ավելի է հստակվում:

Իսկ թե ոնց պետք է դատավորները պարզեն՝ ո՞րն է նպատակը բացահայտող ծավալի չափանիշը, կամ ինչ նպատակ է հետապնդում տվյալ ծավալը կամ նյութն ամբողջությամբ, ի՞նչ չափիչ կամ կշեռք պետք է օգտագործեն այդ եւ մի շարք այլ լղոզված արտահայտությունները օրենքի կիրառման ժամանակ ի գործ դնելիս՝ անհայտ է ու իրավական մեկնաբանման սուբյեկտիվիզմի դաշտ է բացում:

Հուսանք՝ այս փոփոխությունները առավել հոգեբանական թեթեւ դեր կխաղան՝ զսպելու գրագողությունը: Չնայած՝ մենք մեծ հույսեր չունենք, քանի որ ամեն ինչ ի սկզբանե աղավաղված է: Ասենք՝ ո՞վ ունի հնարավորություններ (ֆինանս, տրանսպորտ, հովանավորություն), իհարկե՝ հայտնի կենտրոններից աջակցություն ստացող լրատվամիջոցները, որոնք հաճախ ինչ-որ անիմաստ բամբասանքներով են վարկանիշ ապահովում, կարող են արագ հասնել դեպքի վայր ու անհեթեթ հաղորդագրություններ լույս աշխարհ բերել որպես էքսկլյուզիվ: Իսկ առավել գրագետ, ֆինանսապես դժվարին վիճակում գտնվող ու հնարավորություններից սուղ լրատվամիջոցը դեռ պետք է ապացուցի, որ իր վերլուծականը կամ հրապարակումն են գողացել, իսկ դրա համար ֆինանս ու նյարդ չունի: Ստացվում է, որ այս փոփոխություններով եւս երկու-երեք կենտրոնի կողմից ղեկավարվող լրատվամիջոցների գործն է աջ գնալու:

Ս. Խ.

## Հրատապ խնդիր

# Միջազգային գիտաժողով՝ ի նպաստ հայրենադարձության

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում սեպտեմբերի 4- 5-ը տեղի ունեցավ «Լեզուն, կրթությունը եւ ընտանիքը հայրենադարձության գործընթացում» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողով:

ՀՊՄՀ ռեկտոր **Ռուբեն Միրզախանյանը**, բացելով գիտաժողովի աշխատանքները, նկատեց, որ արտագաղթի խնդիրը հանրության ուշադրության կենտրոնում է՝ անհանգստացնելով ամենալայն շրջանակներին: Նա տեղեկացրեց, որ արդեն մեկ տարի Մանկավարժական համալսարանի եւ «Ավո Հայմասգարտեն» բարեգործական կազմակերպության նախաձեռնությամբ բուհում գործում է ադապտացիոն կենտրոն, որն իրականացնում է «Վերաինտեգրացիայի» կենտրոն-Հայաստան» (RECEA) ծրագիրը: «Լեզվական դասընթացները, սոցիալական, հոգեբանական աջակցությունը, մշակութային տարատեսակ միջոցառումների կազմակերպումը օգնում են նվազեցնել հայրենադարձների տարատեսակ խնդիրներն ու աջակցել սոցիալական վերաինտեգրացմանը»,- ասաց ռեկտորը:

ՀՀ կրթության եւ գիտության նախարար **Արմեն Աշոտյանն** էլ նկատեց, որ կոնֆերանսի բազմաբովանդակ եւ խնդրահարույց թեմաներով հարցադրումները նախարարության ուշադրության առանցքում են: Խոսելով հայրենադարձ երեխաների մասին՝ նախարարը ընդգծեց նաեւ հայրենիքում նրանց կրթության կազմակերպման եւ կրթական կարիքների բավարարման հիմնախնդիրներն ու հատկապես մայրենիի ոչ բավարար իմացությունը:

«Ավանդական եւ նորագույն ժամանակներում ձեւավորված Սփյուռքի կրթական կարիքները տարբեր են. այդ ենթատեքստում տարբերվում են նաեւ հանրակրթական եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթություն տրամադրելու հնարավորությունները: Խնդրի լուծումը մեկ գործընթացով չի տրվում. պետք է ստեղծել ճկուն ու բազմազան այնպիսի համակարգ, որ յուրաքանչյուր հայրենադարձ Հայաստանում կրթությունը մատչելիորեն շարունակելու հեռանկար ու հնարավորություն տեսնի»,- ասաց Արմեն Աշոտյանը:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պետ **Գագիկ Եգանյանը**, կարեւորելով գիտաժողովը, նկատեց, որ սկսած 2000 թվականից միգրացիոն հոսքերի խճապատկերում նկատվում էր շատ թույլ արտահայտված Հայաստան վերադարձողների հոսք. «Բոլոր դեպքում էլ վերադարձից հետո շատ կարեւոր է հայրենիքում անձանց ռեինտեգրացիան եւ այս հարցի լուծմամբ է պայմանավորված, թե այդ անձը կշարունակի՞ մնալ Հայաստանում, թե՞ կրկին կմեկնի: Մի քանի տարի ապրելով հայրենիքից դուրս՝ մարդն իրեն փոփոխված է զգում բոլոր ոլորտներում»: Գագիկ Եգանյանը տեղեկացրեց, որ միգրացիայի ոլորտի կառավարման 2012-2016 թթ ծրագրով նախատեսված են ամենատարբեր խնդիրների լուծումները՝ հայրենադարձների զբաղվածության աջակցություն ցուցաբերում, ստացած հմտությունների, դիպլոմների, որակավորման ճանաչման ապահովում, երեխաների կրթության շարունակության պայմանների ստեղծում, կառավարական կազմակերպությունների միջեւ կապերի խորացում եւ այլն:

«Ուղեղների արտահոսքը» Հայաստանից որեւէ մեկի շահերից չի բխում. այն խաթարում է միջազգային համայնքի հետ համագործակցությունը»,- գիտաժողովի ընթացքում հայտարարեց Հայաստանում DAAD-ի՝ Ակադեմիական փոխանակումների ծառայության ղեկավար **Թինա Լաուֆերը**, նշելով, որ DAAD-ն՝ որպես կրթական կազմակերպություն, համագործակցում է միջազգային բազմաթիվ կառույցների հետ եւ պայքարում արտագաղթի դեմ. «Մենք փորձում ենք ստեղծել մի ընդհանուր միջավայր, որն աջակցում է ուսանողների՝ երկկողմանի համագործակցությանը»:

Թինա Լաուֆերը վստահ է, որ արտագաղթի դեմ պայքարը հնարավոր է իրականացնել միայն այլ երկրների աջակցության եւ համագործակցության շնորհիվ:

«Թիրախային նախաձեռնություն Հայաստանի համար» ծրագրի տնօրեն **Վիրջին Արտոն** հայրենադարձությունը որակեց երկարատեւ եւ բարդ գործընթաց. համապատասխան պետական կառույցները, միջազգային հասարակական կազմակերպություններն ու Սփյուռքը հիմնական դերակատարներն են վերաինտեգրման գործընթացը արժանապատիվ, արդյունավետ եւ կայուն ձեւով իրականացնելու համար. «Այս նախաձեռնությունը ընդգրկել է կառավարական եւ ոչ կառավարական մի շարք կառույցների, անձանց, ովքեր ակտիվորեն պայքարում են արտագաղթի դեմ: Նման ծրագրերը միտված են ապահովելու հայրենադարձությունն ու կանխելու մեծ ծավալի հասնող արտագաղթը: Լեզուն, կրթությունն ու ընտանիքը հատկապես կարեւոր են. այսօր կարիք կա ամրապնդելու կրթությունը, վերապատրաստելու եւ ստեղծելու վերաինտեգրման բարենպաստ միջավայր»,- հավելեց Վիրջին Արտոն:





«Լեզուն, կրթությունը եւ ընտանիքը հայրենադարձության գործընթացում» խորագրով միջազգային գիտաժողովի հանդիսավոր բացումից հետո Հայաստանի, Ռուսաստանի, Գերմանիայի, Բուլղարիայի եւ Լեհաստանի մասնակիցները հանդես եկան բազմաբնույթ զեկույցներով: Քննարկեցին աշխարհի մի շարք երկրներում, մասնավորապես՝ Բուլղարիայում, Լեհաստանում եւ Գերմանիայում հայ միգրանտների խնդիրները, հայրենադարձության հիմնախնդիրները, նրանց վերաինտեգրացումն ու սոցիալական աջակցությունը:

Զեկույցների ընթացքում օտարերկրյա հյուրերն ու ՀՊՄՀ ներկայացուցիչներն անդրադարձան նաեւ «Եվրոմիության հայրենադարձության հիմնադրամ»-ի գործունեությանն ու նշանակությանը, «Ռեսեա» կենտրոնի առկա վիճակին ու հեռանկարներին, հայրենադարձ երեխաների՝ հայերենի դասավանդման մեթոդաբանական խնդիրներին, վերաինտեգրման գործըն թացում հայկական սփյուռքի դերակատարմանը, հայրենադարձների հաջող վերաինտեգրման գործում սկզբնական բիզնես-դրամաշնորհներին:

«Վերաինտեգրացիայի կենտրոն-Հայաստան» (RECEA) ծրագրի համակարգող, Մանկավարժական համալսարանի օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մելանյա Աստվածատրյանը**, կարեւորելով գիտաժողովի կազմակերպումն ու անցկացումը, նշեց. «Այսօրվա զեկույցները հագեցած էին կարեւոր տեղեկատվությամբ եւ վիճակագրական տվյալներով: Հետաքրքրական էին հատկապես միգրանտների կարգավիճակի եւ նրանց իրավունքների մասին ՄԱԿ-ի գրասենյակի ներկայացուցչի հարցադրումները: Գիտաժողովի ավարտին առաջարկված գաղափարների հիման վրա կկազմվի հայտարարագիր, որը կգտնվի Եվրոմիության ուշադրության կենտրոնում՝ նպաստելով կայուն վերադարձին եւ վերաինտեգրման գործընթացին»:

AWO բարեգործական կազմակերպության միջազգային ծրագրի համակարգող **Օլգա Չերկեզն** իր ողջույնի խոսքում ընդգծեց՝ ցանկացած նախագծի հաջողություն պայմանավորված է, թե իրագործման համար ինչ գործընկերներ են ընտրված:

«Տեսնելով հայրենադարձ երեխաների հետ աշխատող ուսուցիչների աշխատանքը՝ կարելի է փաստել՝ Հայաստանը հուսալի գործընկեր է»,-նշեց Օլգա Չերկեզն ու նկատեց՝ դասավանդողները չեն վախենում դժվարություններից, որի արդյունքում հայրենադարձված երեխաների մեջ նկատելի մեծ առաջընթաց կա հոգեբանական, տարիքային առանձնահատկություններից բխող դժվարությունները հաղթահարելու տեսանկյունից:

Վերջինս կարեւորեց նաեւ ծրագրի մշակութային-ճանաչողական դերը, որը հնարավորություն է ընձեռում ինչպես կրթական, այնպես էլ սոցիալական ինտեգրմանը. հայտնվելով ազատ շփումների միջավայրում՝ նրանք իրենց զգում են հայրենի հողում:

Հատուկ կրթության ֆակուլտետի դեկան **Արմինե Ավագյանն** իր զեկույցում անդրադարձավ PECS-ին (Picture Exchange Communication System)՝ որպես ներգաղթած ընտանիքների երեխաների կապակցված խոսքի զարգացման միջոց՝ տարբեր փուլերով ներկայացնելով ողջ գործընթացը: Վերջին տարիներին հայրենադարձ երեխաների հետ Արմինե Ավագյանի աշխատանքը ցույց է տվել՝ PECS-ի մեթոդների կիրառումը նպաստում է երեխաների բառապաշարի հարստացմանը, ձեւավորում ազատ հաղորդակցվելու մշակույթ. «Լավ մշակված խոսքը երեխաների սոցիալականացման, ակտիվ գործունեություն ծավալելու եւ լավ կրթություն ստանալու գրավականներից մեկն է»:

«Հույս եւ օգնություն» ՀԿ նախագահ **Ենոք Շատվորյանն** իր զեկույցում ներկայացրեց կազմակերպության 1998-2013 թվականների գործունեությունը, որն ուղղված է նպաստելու Հայաստանի Հանրապետության բնակչության սեռական, վերարտադրողական եւ հոգեկան առողջության բարելավմանն ու պահպանմանը՝ բնակչության իրազեկության բարձրացման եւ կենսական հմտությունների ուսուցման միջոցով:

Հաջորդող զեկույցներում «Ավո Հայմասգարտեն» ադապտացման կենտրոնի օտար լեզվի ուսուցիչներ **Բելլա Այունցն** ու **Շուշանիկ Պետրոսյանը** ներկայացրին հայրենադարձված երեխաներին ռուսերենի եւ գերմաներենի դասավանդումը, օտար լեզուների դասավանդման բնագավառում առաջադրվող նոր խնդիրներն ու դասավանդման ընթացքում առաջացած խնդիրները:

Գիտաժողովի ավարտին AWO բարեգործական կազմակերպության միջազգային ծրագրի ղեկավար **Ֆոլկեր Թեգելերը** շնորհակալություն հայտնեց Մանկավարժական համալսարանին կոնֆերանսի կազմակերպման, սերտ համագործակցության եւ ակտիվ մասնակցության համար՝ հույս հայտնելով, որ հետագա համագործակցությունը կնվազեցնի հայրենադարձների խնդիրներն ու կնպաստի սոցիալական վերաինտեգրացմանը:

Գիտաժողովի փակումը նշանավորվեց ՀՊՄՀ-ի եւ AWO բարեգործական կազմակերպության միջեւ հուշագրի նախագծի ընդունմամբ, որի ժամանակ հաշվի առնվեցին նաեւ կոնֆերանսի մասնակիցների առաջարկները՝ սեմինարների անցկացում երեխաների ծնողների հետ, հոգեբանական եւ իրավաբանական աջակցություն նաեւ մեծահասակ հայրենադարձների համար եւ այլն:

Սեպտեմբերի 5-ին կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում կայացած միջոցառմամբ էլ ամփոփվեց «Լեզուն, կրթությունը եւ ընտանիքը հայրենադարձության գործընթացում» միջազգային երկօրյա գիտաժողովը:

# Վրացական յուղ՝ հակահայկական կրակին

Հայաստան-Եվրոմիություն առաջացած կիսադադարի եւ մեծացող խնդիրների ֆոնին ինչպես Ուկրաինայի ու Մոլդովայի պատրաստակամության վկայությունները, այնպես էլ հարեւան Վրաստանի՝ եվրոպական ուղղությամբ ընթանալու հավաստիքները այնպիսի տպավորություն են ստեղծում, թե Հայաստանի միջոցով Ռուսաստանի հակաեվրոպական ցանկությունները արդեն բավարարվել են, ու դրանից ազատվածները կարողանում են սրտի ու մտքի ուզածն ասել:

Հասկանալի է, որ ստեղծված իրավիճակում յուրաքանչյուրը շարունակում է իր շահերից բխող ինչպես հայտարարություններ, այնպես էլ քայլեր անել, սակայն ընդհանրական համայնապատկերում արեւելյան գործընկեր կոչվածները յուղ են լցնում այն կրակին, որի վրա Ռուսաստանը՝ ճնշմամբ թե առանց (ըստ Հայաստանի նախագահի՝ առանց), բայց նստեցրել է Հայաստանին՝ Մաքսային միությանն անդամակցության հեռանկարով:

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին, սեպտեմբերի 8-ին Էստոնիա այցելության ընթացքում, ըստ պաշտոնական հաղորդագրության, հայտարարել է, թե Վրաստանը ոչ միայն կնախաստորագրի Ասոցիացման համաձայնագիրը, այլեւ արդեն գարնանը պատրաստվում է ստորագրել այն: Էստոնիայի արտգործնախարար Ուրմաս Պաետն էլ, իր հերթին, հավաստիացրել է, թե Էստոնիան ցանկանում է վիզային ռեժիմի դյուրացման հարցերն էլ ամբողջովին Վրաստանի հետ լուծված տեսնել հնարավորինս արագ: «Հայաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի եւ Վրաստանի վրա ճնշումների գործադրումը Եվրոմիության հետ մերձեցումից հեռացնելու նպատակով անընդունելի է», ասել է էստոնացի դիվանագետը:

Լեհաստանի արտգործնախարար Ռադիսլավ Սիկորսկին էլ Ռիգայի կոնֆերանսի շրջանակներում սեպտեմբերի 7-ին Բիձինա Իվանիշվիլու հետ հանդիպումից հետո նշել է, թե 2014-ին Վրաստանի հետ Ասոցիացման համաձայնագիրը ստորագրված կլինի: Ավելին, Սիկորսկին տեղեկացրել է, որ եթե Վրաստանը բավարարի անհրաժեշտ պայմանները, գործընթացը կարող է արագացվել:

Եթե հակառուսական տրամադրություններում երբեւէ այլ դիրքորոշում չունեցած Էստոնիայի պարագայում ասվածը լիովին տրամաբանական է, ապա Իվանիշվիլու՝ բիզնեսի կանոններին էլ դժվար ենթարկվող մոտեցումները այնքան էլ հուսալի չեն: Մասնավորապես, արդեն երեկ «Ազատությանը» տված հարցազրույցում Վրաստանի միլիարդատեր վարչապետը, որ ներկա դրությամբ առավելապես նաեւ զբաղված է հոկտեմբերին կայանալիք նախագահի ընտրություններով, հայտարարել է Եվրասիական միության շուրջ զարգացումներին հետեւելու, ուսումնասիրելու մասին:

«Ես մեր երկիրը երբեք փորձարկման ենթակա չեմ դարձնի. մենք պետք է վստահ լինենք, թե ինչ ենք ուզում եւ ինչ ենք անում», ասել է Իվանիշվիլին՝ առանձնակի մեկնաբանության անհրաժեշտություն չթողնելով, թե տվյալ դեպքում որ երկիրն է փորձարկման ենթակա ճագարի կամ առնետի դերում:

Ռուսաստանի հարցում, այդուհետեւ, պարզվում է, Իվանիշվիլին առավել լավատես է, քան որեւէ մեկը Եվրոմիությունում կամ գուցե հենց Ռուսաստանում: «Իմ կարծիքով, ոչ մոտ, բայց հեռանկարում Ռուսաստանը կդառնա Եվրոմիության ու ՆԱՏՕ-ի անդամ, նաեւ մոտ ընկեր կդառնա ԱՄՆ-ին», ասել է միլիարդատեր վարչապետը: Նրա խոսքերով՝ Ռուսաստանն իր ձեռագիրն ունի, որի հետ պետք է հաշվի նստել: Ռուսաստանի հետ հարաբերությունների վերականգնման համատեքստում էլ Վրաստանի վարչապետը հայտարարել է, թե հսկա Ռուսաստանին վերադաստիարակելու նկրտումներ չունի:

Իվանիշվիլին շատ այլ նկրտումներ ուներ, որոնք իրականություն դարձրեց, ու դեռ շատերն էլ իրականացնելու ընթացքի մեջ են: Սակայն առայժմ եվրոինտեգրման գծի պահպանման շրջանակներում արվող երկիմաստ հայտարարությունները «յուղում են» մեզ համար ոչ ցանկալի կրակը...

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

# ԱՄՆ պետդեպարտամենտի բարձրաստիճան պաշտոնյան՝ Ադրբեջանի «սեւ ցուցակում»

*1-ին էջից*

Ուշագրավ է, որ Թոմաս Մելիայի այցի մասին ծանուցմանը զուգահեռ Բաքվում Միացյալ Նահանգների դեսպանատունը հատուկ ընդգծել էր, որ ԱՄՆ-ը Ադրբեջանի նախագահի թեկնածուներից «որեւէ մեկին չի պաշտպանում», ինչը նշանակում է, որ եթե փոխպետքարտուղարի օգնականը մեկներ Բաքու, ապա նրա համար Իլհամ Ալիեւը եւ երեկ նախագահի թեկնածու գրանցված Ջահիդ Օրուջեւը, կլինեին հավասար անձինք: Էլ չխոսած ընդդիմության միասնական թեկնածու առաջադրված Ջամիլ Հասանլիի մասին:

Ավելորդ չէ հիշեցնել, որ Ադրբեջանում գտնվելով մինչ նախագահական ընտրությունների մեկնարկելը, նույն Թոմաս Մելիան բաց տեքստով հայտարարել էր, որ Ալիեւի «երրորդ ժամկետը կարմիր գիծ է»: Փաստորեն ամերիկացի դիվանագետն ասել էր, որ իր երկիրը կցանկանար, որ Իլհամ Ալիեւը չառաջադրվեր նախագահի թեկնածու:

Ըստ երեւույթին, իշխող վարչախումբը երկյուղ է ունեցել, որ քարոզարշավի մեկնարկից առաջ գտնվելով Բաքվում՝ ԱՄՆ փոխպետքարտուղարի օգնականը կարող է նույն ոգով կամ ավելի կոշտ հայտարարություններ անել, ինչից հասարակությունը հետեւություններ կաներ, որ Միացյալ Նահանգների կառավարությունը չի աջակցում Իլհամ Ալիեւին:

Ակնհայտ է, որ այդ վտանգը չեզոքացնելու նպատակով է, որ ադրբեջանական կողմը փաստացի հրաժարվել է ընդունել ԱՄՆ փոխպետքարտուղարի գլխավորած պատվիրակությունը: Առանց չափազանցության կարող ենք ասել, որ պետդեպարտամենտի բարձրաստիճան պաշտոնյան Ադրբեջանում հայտարարվել է անցանկալի անձ, նրա անունը հավանաբար տեղ է գտել Ադրբեջանի ԱԳՆ «սեւ ցուցակում»:

Ի դեպ, երեկ Բաքվում է գտնվել ԵԱՀԿ Մինսկի խմբում ԱՄՆ նորանշանակ համանախագահ Ջեյմս Ուորլիկը, որը Իլհամ Ալիեւին է փոխանցել իր երկրի նախագահ Օբամայի ուղերձը: «Թուրան» գործակալության փոխանցմամբ՝ ԱՄՆ նախագահը, մասնավորապես, ասել է. «Եկել է նոր նախաձեռնություններ ցուցաբերելու ժամանակը՝ բանակցությունների ընթացքում ձեռք բերված փոխզիջումների շրջանակներում խաղաղություն հաստատելու համար»:

Այս տողերն Իլհամ Ալիեւին հասցեագրելիս Օբաման տեղյա՞կ էր, որ Ադրբեջանը մերժել է ընդունել փոխպետքարտուղարի օգնական Թոմաս Մելիայի պատվիրակությանը: Եթե՝ ոչ, ապա հաստատ կտեղեկանա: Եվ գուցե որոշում կընդունի այլեւս խաղաղության հասնելու կոչ չանել մի երկրի, որի առաջնորդը «վերընտրվում է» ժողովրդի բացարձակ մեծամասնության անտեղյակության, ընդդիմության հանդեպ գործադրվող բռնաճնշումների եւ դիվանագիտական էթիկետի կոպիտ խախտման պայմաններում: Իլհամ Ալիեւի կարգի բռնապետները սովորաբար ԱՄՆ-ի համար անցանկալի անձինք են հայտարարվում: Թե, «իհարկե, նա շան որդի է, բայց մեր շան որդին է» տարբերակն է գործելու:

ՄԱԿ-Ի ՏՎՅԱԼՆԵՐՈՎ

# Հայաստանը 128-րդ «երջանիկ» երկիրն է

ՄԱԿ-ը կազմել է աշխարհի ամենաերջանիկ երկրների ցանկը: Panorama.am-ը, օգտվելով «UNSDSN» պարբերականից, տեղեկացնում է, որ աշխարհի ամենաերջանիկ երկրների ցանկում ընդգրկված է 150 երկիր: Վարկանիշային ցուցակը կազմվում է քաղաքական ազատությունների, բնակչության սոցիալական ապահովության համակարգի, կոռուպցիայի բացակայության եւ այլ չափանիշների հիման վրա:

Վարկանիշային աղյուսակը գլխավորում է Դանիան, երկրորդ տեղը զբաղեցրել է Նորվեգիան, ապա հաջորդում են Շվեյցարիան, Նիդեռլանդները, Շվեդիան եւ Կանադան:

Հայաստանը 128-րդ տեղում է, Ռուսաստանը՝ 68-րդ, Թուրքիան՝ 77-րդ, Իրանը՝ 115-րդ, Ադրբեջանը՝ 116-րդ եւ Վրաստանը՝ 134-րդ:

# ԱԱԳ-ն լրտեսել է նաեւ օտարերկրյա ընկերություններին



**Բրազիլական Globo հեռուստաալիքը սեպտեմբերի 9-ին հրապարակեց այն ընկերությունների ցանկը, որոնց սերվերների միջոցով ամերիկյան ԱԱԳ-ն լրտեսություն է արել Բրազիլիայում: Google-ի տեղական ստորաբաժանումից բացի, դրանք են Petrobraz պետական նավթային ընկերությունը եւ միջազգային բանկային փոխանցումներով զբաղվող բելգիական SWIFT ընկերության բաժանմունքը:**

**Լրտեսման բուն փաստը թույլ է տալիս եզրակացնել, որ ամերիկյան հետախուզության տեսադաշտում եղել են Բրազիլիայի ոչ միայն քաղաքական գործիչների, այլեւ խոշոր ձեռնարկությունների գործերը, նշում է «Դեյլի մեյլ» թերթը:**

**ԱՄՆ Ազգային հետախուզության ղեկավար Ջեյմս Կլեպպերը փորձել է արդարանալ՝ ասելով, թե գործակալությունները տնտեսական ու ֆինանսական հարցերի վերաբերյալ տեղեկություններ են հավաքում տնտեսական ճգնաժամերը եւ համաշխարհային ֆինանսական շուկաների փլուզումները կանխելու նպատակով:**

**Globo-ի եթերում տեղեկությունը երեկ հրապարակել է ամերիկացի լրագրող Գլեն Գրինուոլդը, որը գաղտնի փաստաթղթեր է ստանում ԿՀՎ եւ ԱԱԳ նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենից: Ավելի վաղ Գրինուոլդը հայտնել էր, որ ԱԱԳ-ն հետեւել է Բրազիլիայի եւ Մեքսիկայի նախագահներ Դիլմա Ռուսեֆի եւ Էնրիկե Պենյա Նյետոյի էլեկտրոնային նամակագրությանը:**

# Կահիրեի ահաբեկչության պատասխանատվությունը ստանձնել է «Ալ Ղաիդան»

**Եգիպտոսի ներքին գործերի նախարար Մուհամմեդ Իբրահիմի դեմ անցյալ շաբաթ Կահիրեում կատարված մահափորձի պատասխանատվությունը ստանձնել է «Ալ Ղաիդային» ենթակա «Անսար Բեյթ ալ Մակդիս» իսլամիստական խմբավորումը: Այդ մասին հաղորդում է «Ֆրանսպրես» գործակալությունը՝ վկայակոչելով խմբավորման համացանցային կայքէջը:**

**«Անսար Բեյթ ալ Մակդիսի» ներկայացուցիչները Ալլահին շնորհակալություն են հայտնում, որ թույլ տվեց հարձակում կազմակերպել, եւ ներողություն են խնդրում, որ իրենց «չհաջողվեց սպանել բռնակալին»:**

**Գրոհայինները խոստանում են մի նոր մահափորձ կազմակերպել Մուհամմեդ Իբրահիմի դեմ, ինչպես նաեւ հարձակում կատարել Եգիպտոսի պաշտպանության նախարար Աբդել Ֆաթթահ ալ Սիսիի վրա: Իսլամիստները այդ երկուսին մեղադրում են Եգիպտոսի տապալված նախագահ Մուհամմեդ Մուրսիի հարյուրավոր կողմնակիցների սպանության մեջ:**

**Ներքին գործերի նախարար Մուհամմեդ Իբրահիմի դեմ մահափորձ էր կատարվել սեպտեմբերի 5-ին: Գրոհայինները ռումբ էին դրել նրա տան մոտ կանգնեցված ավտոմեքենայի մեջ, նախարարի շքախմբի ճանապարհին: Պայթյունից զոհվել էր մեկ մարդ, սակայն նախարարը չէր տուժել:**

**Մուհամմեդ Մուրսիին պաշտպանող «Մուսուլման եղբայրներ» շարժման իսլամիստները չեն ճանաչում Եգիպտոսի նոր իշխանություններին եւ պահանջում են վերադարձնել «օրինական» նախագահ Մուրսիին:**

Պ. Ք.

ՀԱԿԻՐՃ

## Մշակութային նոր ծրագրի մեկնարկ

«Հայկական հուշարձանների ճանաչման ծրագիր» (AMAP) կազմակերպությունը հայտարարում է «Մշակութային փոխանակման հարթակ» (CULTUR-EXP) ծրագրի մեկնարկը: Այն իրականացվում է «Սեւծովյան ավազան 2007-2013» ԵՄ ընդհանուր գործողությունների ծրագրով:

«Մշակութային փոխանակման հարթակը», որի տեւողությունը 24 ամիս է, իրականացնում են Վրաստանի, Հայաստանի, Հունաստանի, Բուլղարիայի եւ Մոլդովայի կազմակերպությունները:

Ծրագիրը նպատակ ունի նպաստելու մշակույթների փոխանակմանը եւ դառնալու առցանց գործիք, որի միջոցով Սեւծովյան ավազանի տարածաշրջանի բոլոր արվեստագետները, արվեստի գործիչներն ու մշակութային գործունեությամբ զբաղվող կազմակերպությունները կարող են գովազդել, քննարկել կամ կազմակերպել մշակութային միջոցառումներ:

AMAP-ի նախագահ Ռիչարդ Նայը նշել է. «Սա չափազանց կարեւոր ծրագիր է հայ արվեստագետներին եւ մշակութային գործիչներին Սեւծովյան տարածաշրջանում եւ դրա սահմաններից դուրս ճանաչելի դարձնելու համար»:

Ի. Պ.

## Հայ պոետը պոեզիայի չինական փառատոնում

Օգոստոսին Չինաստանի Սինին քաղաքում եւ կայացել է պոեզիայի Ցինհայ լճի 4-րդ միջազգային փառատոնը: Այն Արեւելքի խոշորագույն բանաստեղծական հանդեսն է, որին այս անգամ մասնակցել են շուրջ 60 պոետ արտասահմանյան 40 երկրից եւ ավելի քան 160 հեղինակ Չինաստանից: Փառատոնին հրավիրված եւ ներկա էր նաեւ բանաստեղծ Հրանտ Ալեքսանյանը (Հայաստան-Արցախ): Հնգօրյա հարուստ ու հագեցած ծրագիրը փառատոնի մասնակիցներին հնարավորություն է տվել ծանոթանալու չինական գրականության ներկա զարգացումներին, հաստատելու ստեղծագործական կապեր, վայելելու չինական մշակույթի եւ բնության գեղեցկությունները: Հանդեսի առանցքային միջոցառումներից մեկը տեղի է ունեցել լեգենդար Ցինհայ լճի հարեւանությամբ հիմնված պոեզիայի հրապարակում, որտեղ համաշխարհային մեծագույն պոետների, մտածողների, էպիքական հերոսների տպավորիչ արձանաշարում տեղ է գտել նաեւ Սասունցի Դավթի վեհաշուք արձանը: Լույս է ընծայվել փառատոնի մասնակիցների ստեղծագործությունների շքեղ ու ծավալուն անթոլոգիան, որը բացվում է Հ. Ալեքսանյանի բանաստեղծություններով:

Փառատոնը հավակնում է դառնալ աշխարհի պոետական խոշորագույն իրադարձություններից մեկը` թե քանակական, թե հեղինակային որակական կազմով` համահունչ արագ զարգացող փիթխարի այդ երկրի հոգեւոր միտումներին:

ԱՐՄԻՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ

## Երիտասարդական նվագախմբի համերգաշրջանի բացումը շուտով

Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա հանրահայտ դաշնակահարուհի Ջուլիա Զիլբերքվիթի (ԱՄՆ) համերգը` Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի հետ համատեղ (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյան), որով կմեկնարկի նվագախմբի նոր համերգաշրջանը: Ծրագրում կհնչեն Սերգեյ Սլոնիմսկիի «Հրեական ռապսոդիա». կոնցերտ դաշնամուրի, լարայինների, ֆլեյտայի եւ հարվածայինների համար, Պյոտր Իլյիչ Չայկովսկի Սիմֆոնիա թիվ 4, երկ 36 ֆա մինոր:

Դաշնակահարուհի Ջուլիա Զիլբերքվիթը մեծ համբավ է վայելում որպես մենակատար, նվագախմբի երաժիշտ եւ ձայնագրվող արտիստ: Նա ելույթ է ունեցել աշխարհի նշանավոր շատ նվագախմբերի հետ:

Զիլբերքվիթը ելույթ է ունեցել այնպիսի աշխարհահռչակ դահլիճներում, ինչպիսիք են` Նյույորքյան «Քարնեգի Հոլլ»-ը եւ «Լինքոլն կենտրոն»-ի «Էլլիս հոլլ»-ը:

2008-ին Լեոն Բոթշթայնի եւ Երուսաղեմի սիմֆոնիկ նվագախմբի հետ համատեղ Զիլբերքվիթը ներկայացրել է Ն. Սլոնիմսկու դաշնամուրի եւ նվագախմբի համար «Հրեական ռապսոդիա»-ի առաջնանվագն Իսրայելի պետության 60-ամյակին: Այս ստեղծագործությունը նվիրված է հենց իրեն դաշնակահարուհուն:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## ՀԹԳՄ-ն կներկայացնի անվճար ներկայացումներ

Սեպտեմբերի 10-26-ը Հայաստանի թատերական գործիչների միությունում տեղի կունենա վերջին շրջանի մի քանի ներկայացումների ցուցադրություն:

Ի դեպ, յուրաքանչյուր ներկայացումից հետո կանցկացվեն քննարկումներ` թատերագետների, դերասանների, բեմադրիչների, ինչպես նաեւ, ցանկության դեպքում, հանդիսականի մասնակցությամբ:

Միջոցառումը կմեկնարկի «Խոստովանություն» մոնոդրամայով, ըստ Միշել դը Գելդերոդի` ՀՀ վաստակավոր արտիստ Մուրադ Ջանիբեկյանի դերակատարմամբ: Այս տարի վերոնշյալ ներկայացումն արժանացել է «Արտավազդ» ամենամյա թատերական մրցանակաբաշխության «Վահրամ Փափազյան» հատուկ մրցանակին: Ներկայացումը այս ամռանը մասնակցեց նաեւ Կիեւի «Վիդլունյա» մոնոներկայացումների միջազգային 15-րդ փառատոնին` արժանանալով «Լավագույն տղամարդ դերասան» մրցանակին:

Իսկ Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի դերասան, ՀՀ վաստ. արտիստ Ռոբերտ Հակոբյանը կներկայացնի «Ձեզ եմ դիմում տիկնայք եւ պարոնայք» (ըստ Զ. Սուրմելյանի) եւ «Հնագույն մասնագիտություն» (ըստ Թ.Պապաշվիլու) մոնոներկայացումները: Ի դեպ, «Ձեզ եմ դիմումը» այս տարի նույնպես մասնակցեց «Վիդլունյա» մոնոներկայացումների միջազգային փառատոնին` ստանալով գլխավոր մրցանակը:

Կներկայացվեն նաեւ տարբեր տարիներին «Արմմոնո» փառատոնում աչքի ընկած մի շարք մոնոներկայացումներ:

Չեն անտեսվել նաեւ առավել աչքի ընկած երիտասարդական ներկայացումներից մի քանիսը` «Մահը թակում է դուռը», ըստ Վ. Ալենի, բեմադրիչ Լիլիթ Մելիքյան, «Չեմ բողոքում», ըստ Դ. Ֆոյի եւ Ֆ. Ռամեի, բեմադրիչ Մարիամ Սարյան, «Կոմիտասի տասը պատվիրանները», հեղինակ եւ բեմադրիչ Ցոլակ Մլքե-Գալստյան: Դիտումները կեզրափակի Արթուր Կարապետյանի «Յագո» ներկայացումը, ըստ Վ. Շեքսպիրի:

Ներկայացումների մուտքն ազատ է:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## Սիրո ու տառապանքի գինը

«... Օրը` սովորական, խաղաղ օր էր...»: Թվում է` այդպիսին են կյանքի գրեթե բոլոր օրերը, նման իրար այնքան, որ հանկարծ կարծում ես` ապրել ես մի օր ընդամենը: Մի պահ միայն: Եվ երբ դրանք, օրերն այդ «հանգավորվեն» այնպես, որ հիշողությանդ մատյանում վերածվեն բազմաձայն երգեցողության, բազմերանգ խճանկարի, ուրեմն հոգուդ հայացքը արթուն է եւ աչքդ` աշխարհին բացված, ուրեմն բաց-պատուհան ես, ոչ թե` գոց-դուռ:

Այդ սովորական օրվա խաղաղությունը խզում է մորթված Ծառի պատգամը եւ ձայնում իրեն հիշող հեղինակին. «Մի եղիր այդքան լի ու այդքան թանձր, ուժեղ եւ քո ներսում իսկ հարուստ, այլապես մի օր ճաք կտաս քո սեփական ծանրությունից: Ու այս աշխարհում կգտնվի մեկը, ով օգտվելով քո ինքնաճեղքվածությունից, վրա կտա` հասցնելու քեզ վերջին հարվածը: «Բարի նպատակներով»: Քեզ քո ճեղքվածությունից ազատելու վեհ մղումով, եւ իր աչքերը քո շքեղությամբ չծածկելու մարդասիրական օգնությամբ»:




Թամար Հովհաննիսյանը վերջերս հրատարակած նոր ժողովածուն խորագրել է «Կյանքիս խճանկարը», ես կսրբագրեի` «Հոգուս խճանկարը»: Մի տեղ նա ասում է, թե ծով չի սիրում, իրենը երկինքն է, իր մղումը դեպի վեր է, իր սաղարթները դեպի երկինք են ձգվում: Մարմնավորված մեր հոգին աշխարհն ընկալում է միջնորդված ու մնում հիմնականում չհասկացված, մարդկային պատկերացումների պարտադիր աղավաղումների մեջ` անհաղորդ: Արվեստը երեւի նաեւ դրա՞ համար է ստեղծված, որ հնչյունի, բառի, գույնի գեղարվեստական երեւակայության հորինվածքներում ստեղծագործողը փորձի ինքնաթարգմանվել, երբեմն` ինքնամերկության աստիճան անթաքույց բացվել, որպես բարձրաձայն մտորում, ինքնախոստովանանք աշխարհին:

Այս պարագայում մենք հանդիպում ենք ոչ թե երեւակայական, հնարածին-տեսիլքային գեղարվեստական պատկերավորման, այլ կյանքային իրականության իմպուլսների անձնական արձագանքների, որոնք հեղինակի ներաշխարհի պրիզմայի միջով անցել ու բանաստեղծական հուզականություն են ձեռք բերել:

Ժանրային առումով դժվար է տարբերակել էսսենե՞ր, ակնարկնե՞ր, թե՞ նամակներ են արձակ այդ գրությունները, մեկ բառ է միտքս հուշում` ինքնագրությո՞ւն, ինքներգությո՞ւն, որովհետեւ հեղինակը գրում է իր մասին, մենախոսում կամ զրուցում ինքն իր հետ, իր տեսածի, զգացածի ու ապրածի մասին, դա իր հայրենիքն է, կտրած ծառի վիշտը, մարդու երկրային անցուղիներն են` ցավից մինչեւ հաճույք, ռոյալի կողքին կախված բեմազգեստը-միեւնույնն է. ինքը խոսում է աշխարհի ամեն երեւույթի, ամեն բանի հետ` ծղրիդի, զգեստի, իր արխիվի, մենակության, ազատության, սիրո ու մահվան հետ` այդ զրույցների մեջ բացելով աշխարհընկալման անհատական նուրբ ու զգայական շերտեր, որտեղ ցավը միշտ անպակաս է, անպակաս է, քանզի անկատար է աշխարհը. «Այս Մոլորակին Մայր է պակասում: Որբանում է Մոլորակը քո ձեռքին` տղամա՛րդ»: Գենդերային հավասարությունից հեռու այս զգացումները գովքն են աշխարհի երկսեռ ներդաշնակության, դրանց նախաստեղծ վիճակների` բնական ու ճշմարիտ: Զգացմունքների այս թափանցիկ կտավին հեղինակը օր օրի ավելացնում է նոր գույն, թարմ գիծ, պատկեր, ու ստեղծվում է սեփական կյանքի խճանկարը, որտեղ Ազատությունը հստակ անուն ու պատկեր ունի` Ընտրությո՛ւն:

«Դու ընտրեցիր Ազատությունը, զի ազատ է նա, ով ստեղծագործում է, ես չկամ այնտեղ, որտեղ զբաղվում են ո՛չ արարումով: Ես չկամ այնտեղ, որտեղ զբաղվում են «հաշվապահությամբ», ոչ թե սիրում»: Ստեղծագործումը ազատագրում է մարդու հոգին, ազատ մարդն է, որ կարող է հասկանալ ինքնաճանաչողության արժեքը եւ անհրաժեշտությունը, եւ գիտակից է Նորին մեծություն մահի... հարցերին: Նա գիտի-իր ներսի թատրոնի գլխավոր գործող անձինք երեքն են` Հավաքարարը, Փոստատարն ու Մահը. առաջինը` փոշու նստվածքը իր ներսի կացարանից հավաքելու, երկրորդը` ճիշտ հասցեով սիրո նամակը տեղ հասցնելու: Ու այնժամ մահը կասի իրեն. «Դու ապրեցիր քո կյանքը, որպես Միջնարար մահվան ու մահվան միջեւ: Դու ապրելու ես քո մահը` որպես Միջնարար կյանքիդ ու կյանքիդ միջեւ»:

Երեւանից հետո Բեյրութը իր կյանքի խճանկարի հաջորդ տիրապետող գույնն է: Բեյրութը այնպե՞ս աննկատ նուրբ ու սերտորեն է ներհյուսվել իր կյանքին, որ արեւելյան այս շքեղ քաղաքի տաք բույրը նա փոխանցում է զարմանալի հարազատությամբ-այնտեղ ապրող հայի առտնին, ամենօրյա սպասումից մինչեւ, չնայած օտարության մեջ ապահովություն գտած, բայց հոգում անթեղված հայրենիքը վերագտնելու թրթռացող հույսը:

Ահա «Դրացին»` միմյանց օտար, միմյանց լեզուն չիմացող երկու մարդկանց լուռ-մտերմացած զրույցը: Ահա արաբ խանութպանի հետ հանդիպումը` ֆրանսա-անգլո-արաբերենով միմյանց սահուն հասկանալը (Բաբելոնի աշտարակի տխուր հետեւանքը), ահա տան պատուհանից ամեն օր իր հետ լույսը դիմավորող ծառի պատգամը, որպես մարդու` բնությունից հեռանալու սուր ցավ: Ահա Արաքսը` Բեյրութի Բուրջ Համուդ հայկական թաղամասի հիմնական մայրուղին. «Արաքսը մի աշխարհ է: Տարօրինակ, ինքնատիպ: Արաքսը ոգի ունի: Հոգի, դեմք ունի: Ձայն: Երազանք»: Արաքսի մայթերին խանութներ են, հայերի խանութներ: Ինքը սիրում է քայլել այս փողոցով, հայացքը դիպչում է անցորդներին, հայրենակից անցորդներին, խանութի ապակիների հետեւում նստած օրիորդի աչքերին. «Չեմ կարողանում նայել քո աչքերին: Ներիր ինձ: Տե՜ր գթա... Կամ նրան կամ ինձ: Դի՛ր իմ գրպանի մեջ այնքան փող, շատ փող, որ այս աղջիկը այսօր լիաթոք ժպտա: Տուր ինձ` որ ես տամ:

... Ով գիտի տառապանքի գինը, իմ տառապանքի գինը, Արաքսի մայթերով քայլելիս` անչափելի: Ինչպես անչափ ու անտակ է այս մարդկանց աչքերում ապրող ցավն ու կարոտը:

... Այստեղ է աշխարհի այն տեղը, ուր անասելի քաղցրությամբ զգում ես քո հայ լինելը: Գուցե այնպես, ինչպես երբեք եւ ոչ մի տեղ: Այստեղ է, որ ամբողջ էությամբ զգում ես, ենթագիտակցորեն եւ գիտակցորեն հասկանում, որ նրանք եւ դու` նույնն եք, նույն արյունն եք, այս Տիեզերքի ընդհանուր նույն մասնիկը»:

Գրքի երկրորդ բաժնում հոգու խճանկարի զգայական գույներն ու պատկերները «հավաքվում» են բանաստեղծական չափատողերով. դրսեւորվում է կյանքը բանաստեղծորեն ապրող, ընկալող ու վերարտահայտող մտավորական կնոջ զգայուն-խոհական կերպարը:

*Իմ զորեղ թշնամի`*
*Ժամանակ` կողոպտող,*
*Ես ամեն առավոտ*
*Մերկ եմ արթնանում:*
*Եվ նման եմ*
*Խեղճ շինականի,*
*Որն օրեցօր*
*Նույն պատն է շարում:*
*(«Ժամանակը եւ ես»)*

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# ՀՀ հավաքականը կորուստներով է մոտենում դանիացիների հետ հանդիպմանը

*Չնայած դրան, մեր ֆուտբոլիստներից հաղթանակ ենք ակնկալում*

Այսօր ժամը 20-ին «Հրազդան» մարզադաշտում կտրվի Հայաստան-Դանիա ընտրական մրցախաղի մեկնարկը: Չեխիայի հավաքականի նկատմամբ տոնած հաղթանակը Հայաստանի հավաքականին հնարավորություն ընձեռեց շարունակելու պայքարը խմբում 2-րդ տեղը գրավելու համար: Ճիշտ է, այդ հաղթանակը ձեռք բերվեց մեծ կորուստների գնով: Ինչպես հայտնի է, Ռոման Բերեզովսկին վնասվածք ստացավ ու փոխարինվեց, իսկ Ռոբերտ Արզումանյանն ու Յուրա Մովսիսյանն էլ 2-րդ դեղին քարտերը ստանալով, ստիպված կլինեն բաց թողնել Դանիայի հետ կայանալիք անչափ կարեւոր հանդիպումը: Հարցականի տակ է նաեւ Արաս Օզբիլիզի մասնակցությունը խաղին:



Խաղի նախօրեին ՀՀ հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը հանդիպեց լրագրողներին: Նա նշեց, որ այս պահին մտածում է միայն Դանիայի հավաքականի հետ հանդիպման մասին, որին մեր ընտրանին մոտենում է կորուստներով: Չեխերի հետ խաղից հետո ամեն ինչ արվում է, որպեսզի ֆուտբոլիստները շուտ վերականգնվեն: Մարզումներն էլ ավելի քիչ ծանրաբեռնված բնույթ են կրում: Ռոման Բերեզովսկին չի մասնակցի հանդիպմանը: Նրա պատրաստման համար մոտ 20 օր կպահանջվի: Արաս Օզբիլիսը սննդից թունավորվել էր եւ պետք է կրկին հետազոտվի: Վարդան Մինասյանը հույս հայտնեց, որ ամեն ինչ լավ կլինի: Օզբիլիսի մասնակցությունը մեր հավաքականի համար շատ կարեւոր է: Այդ հարցի պատասխանից շատ բանով պայմանավորված կլինի, թե ով կփոխարինի որակազրկված Յուրա Մովսիսյանին:

Հավաքականի գլխավոր մարզիչը դիտել է Դանիայի մասնակցությամբ վերջին հանդիպումը Մալթայի հետ: Ըստ Մինասյանի, դանիացիներն իրենց խաղաոճը չեն փոխել: Պարզապես սկսել են երիտասարդացնել կազմը: Դանիացիների կազմում ներկայումս 6 նորեկներ են ընդգրկված: Վարդան Մինասյանը չհամաձայնվեց լրագրողների այն դիտարկմանը, որ հավաքականը Երեւանում վատ է խաղում: Ըստ նրա, սեփական հարկի տակ միայն Մալթայի հետ ենք վատ խաղացել: Սակայն փաստ է, որ ընտրական մրցախաղերում Երեւանում մեր հավաքականը դեռեւս հաղթանակ չի տոնել: Գլխավոր մարզիչը նաեւ նշեց, որ չի զղջացել, որ ավելի շատ ֆուտբոլիստների չի հրավիրել հավաքական: Ներկայիս կազմի 22 ֆուտբոլիստները լիովին բավարարում են Մինասյանին: Այսօրվա խաղում ավագի թեւկապը կկրի Հենրիխ Մխիթարյանը:

Հաշվի առնելով մեր հավաքականում ստեղծված իրավիճակը, պետք է փաստել, որ իրոք դանիացիների հետ շատ դժվարին մրցավեճ է սպասում: Սակայն մեր ֆուտբոլասերները լավատես են ու հույս ունեն, որ այսօրվա խաղում էլ հավաքականն ուրախություն կպատճառի իրենց: Իսկ ահա բուքմեյքերները նախապատվությունը տալիս են դանիացիներին, որոնց հաղթանակի գործակիցը 2,10 է: ՀՀ հավաքականի հաղթանակի համար խաղադրույքներ են ընդունվում 3,2 գործակցով: Իսկ ոչ-ոքին գնահատվում է 3,6 գործակցով:

## 2-րդ տեղի համար պայքարը չափազանց սրվեց

**Ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի 7-րդ տուրի հանդիպումներն ավելի սրեցին իրավիճակը B խմբում 2-րդ տեղի համար ծավալվող պայքարում: Դանիայի ընտրանին հյուրընկալվելիս 2-1 հաշվով հաղթեց Մալթային, իսկ իտալացիները սեփական հարկի տակ 1-0 հաշվով պարտության մատնեցին բուլղարացիներին: Այդ հաղթանակից հետո իտալացիներն ավելի ամրապնդեցին առաջատարի իրենց դիրքը, իսկ ահա 2-րդ տեղի համար սուր մրցապայքար է ծավալվելու 4 հավաքականների միջեւ:**

**A խմբում ուղեգրի նվաճմանը շատ մոտ է Բելգիայի հավաքականը, որը հյուրընկալվելիս 2-0 հաշվով հաղթեց շոտլանդացիներին: Իսկ ահա 2-րդ տեղում ընթացող խորվաթները սերբերի հետ արտագնա հանդիպումն ավարտելով ոչ-ոքի` 1-1, 5 միավորով հետ մնացին բելգիացիներից: Մակեդոնիան 2-1 հաշվով հաղթեց Ուելսին:**

**C խմբում ավստրիացիների նկատմամբ վստահ հաղթանակ տոնեցին գերմանացիները` 3 անպատասխան գնդակ խփելով: Հաշիվը բացեց Միրոսլավ Կլոզեն` խփելով հավաքականի կազմում իր 68-րդ գոլը: Այդ ցուցանիշով նա հավասարվեց Գերմանիայի հավաքականի բոլոր տարիների լավագույն ռմբարկու Գերդ Մյուլլերին: Գերմանիան 19 միավորով գլխավորում է աղյուսակը: 14 միավորով 2-րդ տեղում ընթացող շվեդները 2-1 հաշվով հաղթեցին իռլանդացիներին:**

**D խմբում Հոլանդիայի հավաքականն առաջին միավորը կորցրեց` հյուրընկալվելիս անտպասելիորեն ոչ-ոքի խաղալով էստոնացիների հետ: Ընդ որում միայն խաղավերջում հոլանդացիներին հաջողվեց խուսափել պարտությունից: Հոլանդիան 19 միավորով առաջատարն է: 13 միավոր ունի Ռումինիան, որը 3-0 հաշվով հաղթեց Հունգարիային:**

**Տարօրինակ հաշիվ գրանցվեց Շվեյցարիա-Իսլանդիա խաղում (4-4): Շվեյցարիան 15 միավորով E խմբի առաջատարն է: 11 միավոր ունի Նորվեգիան, որը 2-0 հաշվով պարտության մատնեց Կիպրոսին:**

**F խմբում Պորտուգալիայի հավաքականը Քրիստիանու Ռոնալդուի հեթ տրիկի շնորհիվ հաղթեց հյուսիսիռլանդացիներին (4-2) եւ 17 միավորով գլխավորում է F խմբի աղյուսակը: Ռուսները 4-1 հաշվով հաղթելով Լյուքսեմբուրգին, վաստակել են 15 միավոր եւ մեկ խաղ պակաս են անցկացրել:**

**G խմբում 16-ական միավոր ունեն Բոսնիան եւ Հունաստանը: Բոսնիան սեփական հարկի տակ 0-1 հաշվով զիջեց Սլովակիային, իսկ հույները մրցակցի դաշտում հաղթեցին Լիխտենշտեյնին (1-0):**

**H խմբի առաջատար Անգլիայի հավաքականը 4-0 հաշվով ջախջախեց Մոլդովային, իսկ Չեռնոգորիան ոչ-ոքի (1-1) խաղաց լեհերի հետ: Անգլիան ու Չեռնոգորիան 15-ական միավոր ունեն:**

**I խմբում առաջատարը 14 միավորով Իսպանիան է, որը հաղթեց ֆիններին (2-0): Ֆրանսիան գոլազուրկ ոչ-ոքի խաղալով վրացիների հետ, վաստակեց 11 միավոր:**

**Ահա կայացած մյուս խաղերի արդյունքները. Ղազախստան-Ֆարերներ` 2-1, Թուրքիա-Անդորրա` 5-0, Սլովենիա-Ալբանիա` 1-0, Իսրայել-Ադրբեջան` 1-1, Լատվիա-Լիտվա` 2-1, Ուկրաինա-Սան Մարինո` 9-0:**

**Մրցաշարային աղյուսակ**

**B խումբ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Իտալիա | 7 | 5 | 2 | 0 | 13-4 | 17 |
| 2. Բուլղարիա | 7 | 2 | 4 | 1 | 11-5 | 10 |
| 3. Չեխիա | 7 | 2 | 3 | 2 | 7-6 | 9 |
| 4. Հայաստան | 7 | 3 | 0 | 4 | 8-9 | 9 |
| 5. Դանիա | 7 | 2 | 3 | 2 | 8-10 | 9 |
| 6. Մալթա | 7 | 1 | 0 | 6 | 3-16 | 3 |

## Սերենա Ուիլյամսի 17-րդ տիտղոսը

**Թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնության կանանց մենախաղի հաղթող ճանաչվեց ամերիկուհի Սերենա Ուիլյամսը, որը եզրափակիչում 2 ժամ 44 րոպեում հաղթեց բելառուս Վիկտորիա Ազարենկոյին (7-5, 6-7, 6-1): Սերենան 2-րդ տարին անընդմեջ նվաճեց գլխավոր մրցանակը, ընդ որում անցյալ տարի էլ եզրափակիչում նա հաղթել էր Ազարենկոյին: 2001-ից սկսած առաջին անգամ ԱՄՆ-ի ներկայացուցչին հաջողվեց պաշտպանել ԱՄՆ-ի բաց առաջնության չեմպիոնուհու տիտղոսը: «Մեծ սաղավարտի» մրցաշարերում Սերենա Ուիլյամսն իր 17-րդ տիտղոսը նվաճեց:**

**Կանանց զուգախաղում չեխ թենիսիստուհիներ Անդրեա Գլավաչկովան եւ Լյուսի Գրադեչկան պարտության մատնեցին ավստրալական զույգին` Էշլի Բարտիին եւ Կեյսի Դելակուային (6-7, 6-1, 6-4):**

**Տղամարդկանց զուգախաղում հաջողությունն ուղեկցեց չեխ Ռադեկ Շտեպանեկին, որն ընկերակցելով հնդիկ Պաեսս Լեանդերին, առավելության հասավ Ալեքսանդր Պեյա (Ավստրիա)-Բրունո Սոարես (Բրազիլիա) զույգի նկատմամբ (6-1, 6-3):**

ԾԱՆՐԱՄԱՐՏ

## Հայ ծանրորդներից երկուսը Եվրոպայի չեմպիոն հռչակվեցին



*Սիմոն Մարտիրոսյան*

**Կլայպեդայում ավարտված ծանրամարտի Եվրոպայի պատանեկան առաջնությունում հիանալի ելույթներ ունեցան հայ պատանի ծանրորդները, որոնցից 9 դարձան մրցանակակիրներ: Նրանցից 2-ը` Սարգիս Կիրակոսյանը (85 կգ) եւ Սիմոն Մարտիրոսյանը (94 կգ-ից բարձր) դարձան Եվրոպայի չեմպիոններ մինչեւ 17 տարեկանների մրցաշարում:**

**Մինչեւ 85 կգ քաշային կարգում չեմպիոնի տիտղոսի համար հիմնական պայքարն ընթացավ Սարգիս Կիրակոսյանի եւ Արսեն Մարտիրոսյանի միջեւ: Այդ պայքարում ուժեղագույնը ճանաչվեց Սարգիս Կիրակոսյանը, որը հստակ կատարելով բոլոր 6 փորձերն էլ, երկամարտի 249 կգ (109+140) արդյունքով հռչակվեց Եվրոպայի չեմպիոն: Արսեն Մարտիրոսյանը 242 կգ (108+134) արդյունքով դարձավ արծաթե մեդալակիր` 2-րդ մրցանակակիր դառնալով նաեւ առանձին վարժություններում: Բրոնզե մեդալը նվաճեց իտալացի Մաթեո Կուռկուռուտոն` 223 կգ (101+122):**

**94 կգ-ից բարձր անձնական քաշ ունեցող ծանրորդների մրցավեճում վստահ ելույթ ունեցավ Սիմոն Մարտիրոսյանը` ոսկե մեդալ նվաճելով ինչպես երկամարտում, այնպես էլ առանձին վարժություններում: Երկամարտի նրա արդյունքը` 367 կգ (167+200) 42 կգ-ով գերազանցում է ռուսաստանցի Յուրի Ախմեդիանովի ցուցանիշը, որը գրավեց 2-րդ տեղը: Բրոնզե մեդալակիր, ռումինացի Միրչեա Ռոմանը ցույց տվեց 321 կգ (145+176) արդյունք: Հայաստանի մյուս ներկայացուցիչը` Արեն Հարությունյանը երկամարտի 305 կգ (135+170) արդյունքով գրավեց 5-րդ տեղը:**

**Մինչեւ 17 տարեկանների մրցաշարում 77 կգ քաշային կարգում Մանուկ Մկրտչյանը երկամարտի 285 կգ (123+162) արդյունքով դարձավ բրոնզե մեդալակիր: Մեր մյուս մասնակիցը` Նորայր Ավետիսյանը երկամարտի 277 կգ (122+155) արդյունքով գրավեց 6-րդ տեղը:**

**Մինչեւ 85 կգ քաշային կարգում ծանրորդ Հովհաննես Ավդալյանին չհաջողվեց մրցանակակիր դառնալ: Նա երկամարտի 295 կգ (135+160) արդյունքով գրավեց 5-րդ տեղը:**

**Մինչեւ 15 տարեկան աղջիկների մրցավեճում Սոնա Պողոսյանը (63 կգ) 5 ծանրորդուհիների հետ պայքարում երկամարտի 177 կգ (77+100) արդյունքով դարձավ Եվրոպայի փոխչեմպիոնուհի: Նա բրոնզե մեդալ նվաճեց պոկում վարժությունում, իսկ հրումում դարձավ արծաթե մրցանակակիր:**

**63 կգ-ից բարձր քաշային աղջիկների մրցապայքարում Հռիփսիմե Պողոսյանը երկամարտի 170 կգ (77+93) արդյունքով գրավեց 4-րդ տեղը:**

## Մեկնարկել է «Սեւանա լիճ-2013» շախմատի մրցաշարը

**Մեկամյա ընդմիջումից հետո Հայաստանի շախմատի ակադեմիան շախմատի համապետական ֆեդերացիայի հետ համատեղ կրկին անցկացնում է «Սեւանա լիճ-2013» մրցաշարը: 2005-ից անցկացվող հերթական մրցաշարը ՖԻԴԵ-ի 16-րդ կարգի է: Շրջանաձեւ մրցակարգով անցկացվող մրցաշարին մասնակցում են 10 շախմատիստներ Հայաստանից, Ավստրիայից, Բելառուսից, Լեհաստանից, Ռուսաստանից եւ Ուկրաինայից:**

**Մեկնարկային տուրում մեր շախմատիստներից հաղթեցին միայն Արման Փաշիկյանն ու Կարեն Գրիգորյանը: Արմանը պարտության մատնեց Զավեն Անդրեասյանին, Կարենը հաղթեց Ռոբերտ Հովհաննիսյանին: Ավետիք Գրիգորյանը պարտվեց Յուրի Կուզուբովին: Ոչ-ոքի խաղացին Պոպովն ու Սերգեյ Ժիգալկոն, իսկ Մարկուս Ռագերը հաղթեց Դարիուշ Սվիերչին:**

## Տոկիոն 2020-ի ամառային օլիմպիադայի մայրաքաղաք

**Բուենոս Այրեսում անցկացված ՄՕԿ-ի 125-րդ նստաշրջանում քվեարկությամբ Տոկիոն դարձել է 2020-ի ամառային օլիմպիական խաղերի մայրաքաղաք: Այդ կոչմանը հավակնում էին նաեւ Մադրիդն ու Ստամբուլը: Քվեարկության առաջին փուլում պայքարից դուրս էր մնացել Մադրիդը, որն այդ իրավունքի համար պայքարում էր 3-րդ անգամ: Ստամբուլի թեկնածությունն արդեն 5-րդ անգամ էր դրվում: Հիշեցնենք, որ Ճապոնիայի մայրաքաղաքը մեկ անգամ արդեն հյուրընկալել է ամառային օլիմպիադայի մասնակիցներին: Դա 1964-ին էր:**

## Ըմբշամարտն ընդգրկվեց 2020-ի օլիմպիադայի ծրագրում

**ՄՕԿ-ի 125-րդ նստաշրջանում հաստատվեց 2020-ի ամառային օլիմպիադայի մարզաձեւերի ցանկը: Հուրախություն ըմբիշների եւ այդ մարզաձեւի սիրահարների, ըմբշամարտն ընդգրկվել է Տոկիոյի օլիմպիադայի ծրագրում: Ըմբշամարտից բացի, ցանկում ընդգրկվելուն հավակնում էին նաեւ բեյսբոլն ու սկվոշը:**

**Ընդհանուր առմամբ Տոկիոյի օլիմպիական խաղերում մարզիկները պարգեւները կվիճարկեն 25 մարզաձեւում:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# 13 պարկուճից 11-ը պատկանել է Խաչատրյաններին, 2-ը՝ Բուդաղյաններին

*3-րդ էջից*

Ալումյանը պատմում է, որ հուլիսի 1-ին Ավետիք Բուդաղյանը ճաշկերույթից հետո պետք է վերադառնար տուն, բայց Սուրիկ Խաչատրյանը մի քանի անգամ համառորեն պնդել է, որ «ինքը պետք է իր ախպորը տուն տանի»:

«Մի քանի րոպեի ընթացքում մեքենայում ի՞նչ է տեղի ունեցել, որ Ավետիքը ծեծված վիճակում է մեքենայից իջել, ու ինչքա՞ն խորն է եղել Սուրեն Խաչատրյանի քունը, որ հայտարարել է, թե մեքենայի մեջ քնած է եղել ու չի տեսել, թե իր թիկնապահ-վարորդը ո՞նց է ապտակում ու նվաստացնում Ավետիքին: Այդ օրը Արտակ Բուդաղյանը պետք է կրկին մեկներ զորամաս: Նա խոստովանում է, որ երբեք Ավետիքին այդքան ընկճված չի տեսել: Երբ տեսել է աչքի կարմրածը, հարցուփորձ է արել, ու եղբայրը պատմել է մեքենայի մեջ տեղի ունեցածը՝ նրան արգելելով որեւէ գործողություն կատարել: Արտակը վրդովված դուրս է գալիս տնից, որ մեկնի Ղարաբաղ: Ավետիքը մի քանի անգամ զանգում է ճշտելու, արդյոք Արտակը ճանապարհից չի՞ շեղվել, սակայն բարկացած եղբայրը հեռախոսը չի վերցնում: Ավետիքը մտածում է, որ եղբայրը գնացել է Խաչատրյանների տուն, ինքն էլ է գնում այնտեղ, սակայն երբ ճանապարհից տեսնում է, որ եղբայրն այնտեղ չէ, հետ է շրջվում: Սուրիկ Խաչատրյանի թիկնազորից 5 հոգի սկսում են նրան քաշքշել: Այդ պահին Գորիսից դուրս եկող Արտակ Բուդաղյանը տեսնում է, որ եղբորը Խաչատրյանի տղաները քաշքշում են, եւ մոտենում է տանը: Տեսնելով Արտակի մեքենան՝ հարձակվողներից երեքը մոտենում են նրան: Արտակն էլ հիշում է, որ իր մոտ չլիցքավորված որսորդական հրացան կա, վերցնում է ու դուրս գալիս մեքենայից, որ իր վրա չկրակեն: Նախաքննության տվյալներով ապացուցվել է, որ որսորդական հրացանը լիցքավորված չի եղել: Այդ ժամանակ Սուրիկ Խաչատրյանի տնից երկու կանայք են դուրս գալիս, Բուդաղյաններին հրելով իջեցնում ներքեւ, ու կարող էր ոչինչ չլինել, բայց Սուրիկ Խաչատրյանի որդին՝ Տիգրանը դիրքավորվում է մեքենայի հետեւում եւ 3 անգամ կրակում, դրանից հետո տեսնելով եղբոր ընկնելը՝ Արտակն իր զենքից երկու կրակոց է արձակում: Դեպքի վայրից 13 պարկուճ է հայտնաբերվել, որից 11-ը պատկանել են Խաչատրյաններին: Ավետիք Բուդաղյանը 4-5 մարմնական վնասվածքով մահացել է: Համարել սա Սուրիկ Խաչատրյանի ընտանիքի անդամների կողմից անհրաժեշտ ինքնապաշտպանություն՝ ճիշտ չէ: Այդ իրադարձությունները գլխիվայր շուռ են տվել: Բուդաղյանների վրա առաջինը կրակել են Խաչատրյանի կողմնակիցները: Արտակը պնդել ու պնդում է, որ եղել է կրակոց նաեւ դղյակի վերեւի պատուհանից: Լորետան գոռում էր՝ Սուրիկ էս ի՞նչ արեցիր, բա ասում էիր, ընենց բան էլ չի լինի: Արտակի ասածները հաստատում է նաեւ տեսագրությունը: Մի գնդակ դիպչում է ասֆալտին, վերեւ բարձրանում», ասաց Ալումյանը հավելելով, որ քննիչներն ու փորձագետներն ամեն ինչ արեցին, որ այդ գնդակի հետքը չհայտնաբերվի:

«Այդ հատվածը փչացվեց, որ գնդակի տեղը չհայտնաբերվի, հնարավոր չեղավ գտնել: Տեսագրության մեջ պարզ երեւում էր՝ գնդակի հետքը», ասում է փաստաբանը՝ հավելելով, որ տեսագրության հետ կար նաեւ ձայնագրություն: Մասնավորապես խոհանոցի տեսախցիկն ուներ նաեւ ձայնագրող սարք, եւ վերջին կրակոցն ավելի ուժգին է եղել, քան նախորդները: «Գիտե՞ք ինչ արեցին փորձագետները, ասացին՝ վերջին կրակոցի ժամանակ երկու կրակոց համընկել է, դրա համար էլ ուժգին է լսվել»:

Թեպետ իրականությունն այլ է, սակայն իրավապահ մարմինների անգործունեության ու օրենքներն անտեսելու հետեւանքով միակ մեղադրյալը Արտակ Բուդաղյանն է: «Տիգրան Խաչատրյանի եւ Զարզանդ Նիկողոսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվեց, Լորետա Բարսեղյանն այժմ տուժող է՝ եւ կա մեկ մեղադրյալ, որի նկատմամբ իրականացվում է նախաքննություն: Մյուս կողմից՝ փաստաբանը կարծիք հնչեցրեց, թե իրենք կարծում են, որ Լորետա Բարսեղյանը բողոք չի ունենա, դրա համար Արտակ Բուդաղյանը քրեական պատասխանատվության չի ենթարկվի: Այսինքն՝ Արտակ Բուդաղյանը քրեական պատասխանատվության չի ենթարկվելու միմիայն մյուս կողմի մեծահոգության շնորհիվ: Հասկանո՞ւմ եք՝ ցինիզմն ուր է հասնում», ասաց Ալումյանը՝ հավելելով, որ պատրաստվում է բողոքարկել ՊՆ քննչականի որոշումը:

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Հ. Գ. - Տիգրանին եւ Զարզանդ Նիկողոսյանին բաց թողնելու առնչությամբ եւս մեկ զավեշտալի փաստ: «Ազգ»-ը անդրադարձել էր Խաչատրյանների ընտանիքի փաստաբան Ռուբեն Սահակյանի ասուլիսին, ով ոգեւորված հավաստիացնում էր, թե Խաչատրյանները որեւէ մեղք չունեն, ու Տիգրանին եւ Զարզանդին անտեղի են պահում ՔԿՀ-ում: Լրագրողները խնդրանքին՝ ներկայացնել փաստեր-ապացույցներ, որ Խաչատրյանները մեղավոր չեն, Ռուբեն Սահակյանն ասել էր. «Թռնիկիս արեւ»: Փաստորեն, Լիսկայի հանգավոր անունն ու փաստաբանի «թռնիկիս արեւը» լուրջ հիմնավորում են զինդատախազության համար:**


## Վաճառվում է

Առանձնատուն Էրեբունի թաղամասում, Ռոստովյան փողոց, տուն 48: Ընդ. մակերեսը՝ 132 քմ, բնակելի մակերեսը՝ 86 քմ: Ունի 2 ճակաս 15 մ եւ 9,5 մ: Հարմար է բիզնեսի կազմակերպման համար: Մշտ. ջուր, գազ, ջեռուցում: Վերանորոգված է: Գինը՝ պայմանագրային:

Հեռ. 094-333-009:

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

չեխական «Կարմա» գազի վառարան

Հեռ.՝ 094-48-68-03


## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի վարչատարածքում գտնվող «Թալին» ՋՕԸ-ի կողմից շահագործվող 6 համայնքների Սարի առու սելավատարից (Աշնակ՝ 150.0 հա, Կաթնաղբյուր՝ 65.0 հա, Թալին՝ 260.0 հա, Դաշտադեմ՝ 50.0 հա, Հացաշեն՝ 120.0 եւ Մաստարա՝ 195.0 հա) ոռոգման նպատակով՝ 285 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2013 թ. սեպտեմբերի 12-ին, ժամը 16-00 Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

**ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն**


## Վաճառվում է

4 սեն. բնակարան Եր. Քոչարի փ. (եկեղեցու մոտ, 16/11 հ., 103 քմ), մշտ. ջուր, հին վերանորոգում, փոխված էլ. լարեր, 2 պատշգամբ, գեղեցիկ տեսարան, արեւկող, գինը՝ պայմանագրային:

Հեռ.՝ 093-505-807, (010) 222-730


## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ընդհանուր օգտագործման ծրագրային ապահովման արտոնագրեր ձեռքբերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ՝ ընդհանուր օգտագործման ծրագրային ապահովման արտոնագրեր ձեռք բերելու նպատակով մատակարար կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2) մասնագիտական փորձառություն.
3) տեխնիկական միջոցներ.
4) ֆինանսական միջոցներ.
5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

ՀՀ ռեզիդենտ մասնակիցները հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, ոչ ռեզիդենտ մասնակիցները՝ անգլերեն կամ ռուսերեն:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2013թ. հոկտեմբերի 22-ի ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց, 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2013թ. հոկտեմբերի 22-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2013թ. հոկտեմբերի 29-ին ժամը 16:00:

Բաց ընթացակարգում հաղթողը որոշվելու է՝

1) այն մասնակցին ընտրելու միջոցով, որի առաջարկած գնին եւ ոչ գնային չափանիշներին տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձրն է:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am):

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերի թղթային տարբերակը ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Սույն հայտարարության մեջ նշված բաց ընթացակարգի հետ կապված բողոքները կարող են ներկայացնել գնումների բողոքարկման խորհուրդ՝ <Գնումների մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

**Հասարակայնության հետ կապերի ծառայություն**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից համակարգիչներ, հարակից սարքավորումներ եւ ցանցային սարքավորումներ ձեռք բերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ՝ ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովվելու նպատակով համակարգիչներ, հարակից սարքավորումներ եւ ցանցային սարքավորումներ ձեռք բերելու նպատակով մատակարար կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2) մասնագիտական փորձառություն.
3) տեխնիկական միջոցներ.
4) ֆինանսական միջոցներ.
5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2013թ. հոկտեմբերի 22-ի ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2013թ. հոկտեմբերի 22-ին ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2013թ. հոկտեմբերի 29-ին ժամը 16:00:

Բաց ընթացակարգում հաղթողը որոշվելու է՝

1) այն մասնակցին ընտրելու միջոցով, որի առաջարկած գնին եւ ոչ գնային չափանիշներին տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձրն է:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, հեռ. 59-28-02,59-28-05 ներքին՝ 18-02, 18-05:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերի թղթային տարբերակը ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Սույն հայտարարության մեջ նշված բաց ընթացակարգի հետ կապված բողոքները կարող են ներկայացնել գնումների բողոքարկման խորհուրդ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

**Հասարակայնության հետ կապերի ծառայություն**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 9.9.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: